

ՅԱԽԻՄ ՇԱՐԳՅԱՆ

ԴԵՐ
ԽՍԹԱՎԻԱԾ



ՊԵՏՎԱՆ

ԼՅՈՒՄԻ ԹԱՐԳՅԱՆԻ

1939 Հ ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԵՊՈ ԹԱՐԱՆՏԱ

(ՎԻՃԱԿ)

ՆԿԱՐՆԵՐԸ
Գ. ԳԵՏՐՈՒՑԱՆԻ

Հ 24345



M E S Z P U S

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԵ ՄԱԿԱՐԱՆՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԻ
ՅԵՐԵՎԱՆ

1939

ЛЮСИ ТАРГЮЛ
В ИСПАНИЮ

Гиз, Арм. ССР, Ереван, 1939 г.

ՊԵՌԻ ԻՍՊԱՍԻԱ



Այդ որն Աքառյի հայրը
տուն յեկավ շատ հուզված,
սովորականի պես յերեխա-
ներին չհամբուրեց, փոխա-
նակ ճաշելու, քաշվեց մի
անկյուն, զլուխը կախեց:
— Վայ, սրիկաներ, վայ,
— բացականչեց նա, զայ-

բույթից ձեռքը սեղանին խփելով:

— Այդ ով ե սրիկա, — հարցրեց տղան:

— Խսպանիայում քաղաքացիական կոփի ե. խռոված
քարները գուրս են յեկել հանրապետականների դեմ. Թոռ-
վարարներին զենքով ու զորքով ոգնում ե Քաշխտական
Գերմանիան, Խտալիան, — պատասխանեց հայրը:

Աքան աշխարհագրությունից զիտեր, զոր Խսպանիան
գտնվում ե Յեփրոպայում, հարուստ ե հանքերով, ժողովուր-
պն զրադվում ե զլիավորապես յերկրագործությամբ:

— Հայրիկ, իսկ ինչո՞ւ համար են Քաշխտական պե-
տություններն ոգնում խռովարարներին, — հետաքրքրվեց
Աքան:

— Նրա համար, զոր ուզում են Խսպանիան իրենց
գաղութը դարձնել տիրանալ նրա բնական հարստու-
թյուններին, բանվորական ուժին Հանրապետականները չեն
ցանկանում իրենց անկախությունը կորցնել, չնայած....

— Ի՞նչ...

— Զնայած նրանց սաղմական միջոցները չնշին և քաշխտների դիմաց: Խռովարաբները սմբակոծում են նըր-րանց քաղաքները. թափովում ե կանանց, յերեխաների ար-յունը...

Արտոն գիշերը չկարողացավ ընել:

Նա պատկերացնում էր, թե ինչպես սումբը մեոցնում ե խաղանացի մանուկներին: Նրանց հայրերը, մայրերը ցա-վից մորմոքում եյին ու ավելի կատաղի կովում:

— Մեր հոգը չենք տա ձեզ:

— ԶԵ-Է-Է-Ք տա...

Ու ճարճատում եյին գնդացիքները ֆաշխտական:

— Գը ուզը ու զը ու:

Ու պայթում եյին սումբերը ֆաշխտական:

— Բում բնումքում:

Սյրվում եյին գյուղերն ու քաղաքները հանրապետա-կանների: Դիակներ, դիակներ... վողջ մնացածները փախ-չում եյին սարերը:

Գիշեր: Տեղում եր անձրեւ Համբարայը, զլխիկոր գե-սի անտառ եր ընթանում գաղթականների մի ամբողջ խումբ: Ծերերը գրկել եյին մանուկներին: Մանուկները նվում եյին քաղցից:

Մութ-մութ եր: Ճանապարհն անսովոր, խորդ ու բորդ: Նրանց վասները գեմ եյին առնում քարերի, ընկնում եյին ջրերի մեջ: Նրանք չեյին համարձակվում լուցիի վառել թշնամու աչքը սուր ե, կտեմնի:

Ազատվեցինք, ազատվեցինք մահից,—ուրախացած շշնջացին նրանք տեղ համնելով: Հանկարծ... հանկարծ ֆա-շխտներն արձակեցին զագ...

Խեղգվեցին ծեր ու յերեխա, թռչունները գիտացած ընկան ծառերից...

Արտօն շատ հարուստ յերեակայություն ուներ: Նա չափազանց սիրում էր լսել պապիկին: Պապը զանազան հեքյախներ էր պատմում:

— Հետմ... հետո ի՞նչ յեղափ պապի:

— Հետո նա նոստեց հրեղեն ձին ու մի բոպեյում Արաքսատանից հասավ Հնդկաստան: Յերբ քաղցեց, մաղր տիեց կրակին, իջակ աներեսույթ սիռոցը, նա կերափ կրշտացափ, սիռոցն ելի ծալվեց, չքացափ:

Ապա պատմում էր Պղնձե քաղաքի մասին, թե ինչպես վճռելը կախարդական գափազանի մի հարվածով արձան էր գարձրել բնակիչներին: Թե ինչպես Բաղդագի գողը, ու մորթու վրա նստած, թռչում էր ոգում... Նրան չեյին կարողանում բռնել, վորովինեան մորթը կախարդական էր. դողը գառնում էր անտեսանելի:

Արտօն լսում էր, լսում: Յերեակայությունից վառվում էյին աչքերը, ընդհատվում էր չնչառությունը... Հեքյախների տաղափրության տակ նա հեռանում էր տանից, յերեան ի վայր պառկում խստերի վրա, մտածում:

Յեթե ինքը վճռել լիներ, գափազանի մի հարվածով քար կղարձներ բոլոր կապիտալիստներին, կվերցներ նրանց փողերը, կհեծներ հրեղեն ձին, մի բոպեյում կհասներ իսպանիա, կրաժաներ հարստությունը սովատանչ զյուղացիներին, գործազուրկ բանվարներին ու կասեր.

— Կերեք, ուժեղացեք, վոր ավելի լավ կույիք Ֆրանկոյի գեմ, ամրագծ իսպանիան գարձրեք հանրապետական:

Հետո յիշ աներեսույթ մորթի հագած կդար, կկտրեր Հիուերի գլուխը, Մուսուլմանիի գլուխը, ճատկոնական գեներալների գլուխը, մի խոսքով բոլոր Փաշխատների գլուխները:

Իսկ յեթե լիներ կախարդական սեղան, կմտներ բանաերը, կկերակը հեղափոխական կալանավորներին: Կկուրեր յերկաթե պատուհանները, լայն-լայն կրանար դուներն ու կասեր.

— Դներս յեկեք, դժւրս յեկեք... Ազատություն եմ բերել ձեղ համար: Այ թե կուրախանար ընկեր Թելմանը, այ թե կաիրեր Արտոյին...

Հաճախ պատահում եր, վոր յերևակայության ամենաառաջնադեպ ըստելիքին խանգարում եյին ընկերները:

Նա բարկացած վեր եր թոշում, բայց գեռ յերազներից չսթափոված, հրամայում եր:

— Քար դարձեք, արձան դարձեք:

Ընկերները շփոթված նայում եյին իրար: Այդ ըստելիքին նրանք իսկապես քարացածի տպավորություն եյին թողնում: Արտոն, դորձած ազգեցությունից վողեվորված, քըրքըջում եր, ապա միայն ուշը դալով գարմացած հարցնում:

— Ձեզ ի՞նչ ե պատահել, վոր այդպիս...

— Ինչ պատահել ե, ըիչ ե պատահել,—հուղված ընդհատում եյին ընկերները:

ԱՐԴՏԵՐ ԽՈՐՀՐԴԱԿԹՈՒԹՅՈՒՆ



Հաջորդ որն Արտօն
դսլրոց գնաց չափաղանց
մտազրադ: Ընկերների
հետ խռում եր, բայց
մտածում այլ բանի մա-
սին, դաս պատասխանե-
լիս ել այլ բանի մասին
եր մտածում:

— Գնալ Խողանիա,
ոգնել հանրապետական-
ներին:

Հասարակագիտության ժամին՝ այդ միտքն ավելի սըր-
վեց: Ռւսուցի վրա ել շատ եր աղղել այդ կրիվը: Նա
գաղութային քաղաքականության մասին եր խռում:

— Առաջ Անդրկովկասն ել գաղութ Փր ցարական Ռու-
սաստանի ձեռքին: Ճնշումն առաջացրեց ատելություն, ա-
տելությունը՝ պայքար: Վոտքի յելան հայերը, աղքարեջանցի-
ները, վրացիք, աջարները, արևազները: Միջին Ասիայում
թուրքմենները, ուզբեկները, դազախները: առատամբեցին
բոլոր մանր ազգերը, և մեծ Ռուսաստանի աշխատավո-
րության ոժանդակությամբ ցարիդմը կործանեցին:

Մեր հոգը մերն ե, մեր վաստակը մերն ե, — ասացին
Արտօն վոգեվորված ծափահարեց, ապա լուրջ հարցրեց:

— Ընկեր Ավետիսյան, հանրապետականներն ել այդ-
ուհս չեն անիւ:

Ռւսուցիչը դեռ չեր պատասխաներ յերբ Գուրզենն
անհանդիստ ձայնեց:

— Ըսկեր Ավետիսյան, ճիշտ է, խոռվարաբները ուղղական միջոցներ շատ ունեն, բայց չե՞ կարող պատահել վոր հանրապետականները հաղթեն:

Արտօն խոկույն նայեց ընկերոջը:

Նա հասկացավ, վոր ընկերն ել չե՞ սիրում ֆաշիստներին: Յեթե այդպես է, արդյոք չե՞ր համաձայնի միամբն զնալ Իսպանիա:

Ասենք Գուրգենը բավականին վախկոտ է, բայց վաշնչ, յերկուսով ճանապարհորդությունը հետաքրքրական կլինի, ողնությունն ավելի մեծ կլինի:

Ռւսուցիչն ասաց, վոր գեռ զժվար և զուշակել, թե վոր կողմն ե հաղթող հանդիսանալու: Թեև խոռվարաբները զենքով շատ են հարուստ, քանի վոր նրանց ողնում և ֆաշիստական Իտալիան, Գերմանիան, սակայն հանրապետականներն ինքնապաշտպանության մեծ վոզի ունեն, կավում են նաև կանայք, աղջիկները:

— Ըսկեր Ավետիսյան, հանրապետականները կարմիր բույրեր ունեն, վոր վիրավորների վերքերը կաղեն, — ընդհատեց Շուշիկը:

Արտօն լայնացած աչքերով նայեց Շուշիկին: Զլինի նա ել եր ուղում՝ Իսպանիա զնալ... Այ, թե լավ կլիներ յերեքով... Շուշիկը կլիներ կարմիր քուրքիկ, Գուրգենը կլրտեսեր թշնամու թիկունքը, ինքը հաց ու ջուր կտաներ հանրապետականներին, կիսվեր նրանց հետ միասին...

Ահա՛ Քարերի միջից փորսող տալով սար և բարձրանում: Թշնամին նկատում ե նրան: Հարյուրավոր զնդակ և արձակում: Գնդակները զիազում են իրեն և յետ դառնում: Գնդակը չի ուղում սպանել այդպիսի բավ տղային: ԶԵ վոր նա ուտելիք և հասցնում մաբարկներին: Յեթե նա շողնի, նրանք կմեռնեն քաղցից, լաց կլինեն նրանց մայրերը, յերեխանները...

— Ըսկեր Ավետիսյան, Արտօն քնել ե, — հայտնեց մեկը, — զլուխը զբել ե սեղանին ու քնել:

— Յես չեմ քննել, մտածում եմ.—սթափվեց Արտօն։
— Ինչի՞ մասին։
— Վոչնչի...
— Ի՞նչ և պատահել շատ ցրված ես յերեսում այսոք, — հարցրեց ուսուցիչը, — հապա, դասդ պատմիր։
Արտօն կանգնեց։ Սակայն փոխանակ պատասխանելու, ինքն ել չզգաց, թե ինչպես հարցրեց։

— Ինչպես կարելի յէ Բաղանիա համնել...
Շուշիկն ու Գուրգենը զսպանակի պես վեր թռան, կարծես նոտած տեղից չեր կարելի բացատրությունը լսել։
— Հարկավոր և Բաթումիից նստել շոգենսավ, անցնել Սև ծովը, Միջերկրականը, Առեղի ջրանցքը, — հետո... զրամասին հետո, նկատեց ուսուցիչը, այժմ հասարակագիտության ժամ ե, ինչու յեք կողմանակի հարցերով զրազվում։

Յերեկոյան, առանց նախորոք պայմանավորվելու, հավաքվեցին ընկերները։ Նրանք խոսեցին զեսից-զենից, սակայն վոչ-վոք սիրտ չարավ իրենց անհանդատացնող խնդրի մասին առաջինը խոսել։ Մեկին պարզվեց, վոր մյուսները վոչ միայն չելին վերոշել Բաղանիա գնալ, այլ մտքով անգամ չելին անցկացրել։ Այն ժամանակ պիտի բացվեր մեկի գաղտնիքը և մյուսները պիտի ծիծաղեցին նրա վրա։
— Ճիշտ ասացեք, ինչի՞ համար եք յեկել ինձ մոտ, — խորամանկորեն հարցրեց Արտօն, բայց, առանց պատասխանի սպասելու, ինքն ել չզգաց, թե ինչպես հայտարարեց։

— Յես զնում եմ Բաղանիա։ Ո՞վ ե ինձ հետ...
— Ներողություն, յես քեզանից շուտ եմ վճռել, — ընդհատեց Գուրգենը — Յեթե ուզում եք միանալ ինձ, խնդրեմ, շատ ուրախ կլինեմ։
— Եթե դուք այսոք եք մտածել զրամասին, յես

յերեկվանից եմ վորոշել, — նկատեց Շուշիկը, — Յես մինչեւ
անդամ հետո տանելու անհրաժեշտ իրերը կապել եմ: Այն-
պես վոր, յեթե ուզում եք, կարող եք ընկերանալ:

Արտօն վիրավորված կախեց զլուխուր: Ինքը չընի ամ-
բողջ գիշերը, ինքը մտածի ամբողջ ցերեկը իսպանիա գը-
նալու մասին մի ամբողջ նախագիծ կազմի և հանկարծ,
ինչ վոր Շուշիկ կամ Գուրզեն տահն: «Ցեթեւ ուզում ես,
կարող եմ մեզ հետ դադ»...

— Դուք զնում եք, գնացեք, — կրոպիտ կերպով ասոց
նա, — յես իսպանիա չեմ զնում:

— Ի՞նչպես թե, — վրգովիեցին ընկերները, — բա ասում
եյիք...

— Զեզ խարելու համար ասացի:

Շուշիկի խոշոր աչքերը զարմանքից ավելի մեծացան:

— Արտօն, խկապես չես դա:

— Վաչ:

— Իսկ յեթե յես զնամ, չես մատնի ծնողներիա:

— Կմանեմ:

Շուշիկը մտածեց, ապա Բույլ շշնջաց.

— Յես ել չեմ զնա իսպանիա... Միայն ձեզ զարմաց-
նելու համար ասացի:

— Իսկ յես, ոռ գիտեք, վախկուտ եմ: Ի՞նչպես կարող եմ
իսպանիա համանել:

— Միայն ձեղ ծիծաղեցնելու համար ասացի, — խսուց
Գուրզենը:

— Ուրեմն չեք զնա, — խրսխոտ հարցրեց Արտօն:

— Զե, չե, ապնիվ խոսք...


— Իսկ յես կզնամ:

Ծնկերները շփոթված բացականչեցին.

— Բա ասում եյիր...

Արտօն նրանց անվստահ գեմքերին նայելով, ավելի
համարձակ հայտարարեց,

— Հեսց այս գիշեր յես ճանապարհ եմ ընկերու:



Հարկավոր ե ոգնել հանրապետականներին։ Յես կարող եմ
ձեզ ինձ հետ վերցնել, յեթե կամենամ...

— Լուրջ ես խոսում:

— Ազնիվ պիտիներական խռոք:

— Մենք ել զանք քեզ հետ:

— Կարելի յե...

Շուշիկն ու Գուրդենն ուրախացած զբկեցին Արտոյին,
ապա նստեցին խորհրդակցության:

Վարոշից դիշերը, հենց փոք ծնողները քնեն, Արտօն
դուրս գա տանից, ձախ տա նրանց։ Դրա համար հար-
կավոր եր բաց թողնել պատուհանը. լարել լսողությունը։
Պայմանական նշանը լինելու յե «կու-կու»։

Ցերկոսրդ վորոշումն եր վերցնել փող և ուտելիք:

— Իմ հայրը բժիշկ ե, նա վիրակապ ու յոդ շատ ունի:
Ճիշտ ե, չի սիրում, իերը առանց թույլտվության խառ-
նում են նրա պահարանը, բայց այս անգամ կարելի յե։
Այս նա պիտի հասկանա, փոք հանրապետականների վեր-
քերը կապելու համար գեղ և պետք։ Այդպես չե, — հարց-
րեց Շուշիկը։

— Ինարկե այգակես ե, — խրախուսեցին ընկերները։

— Իսկ յես... յես կվերցնեմ հորս ատրճանակը, — հա-
զիվ լսելի շշնջայ Արտօն։ — Թեև հայրիկս չի թողնում փոք
ատրճանակին ձեռք տանք, բայց նա պիտի հասկանա, փոք
առանց դրան չի կարելի ջարդել ֆաշիստներին։

— Միանգամայն ճիշտ ե, — համաձայնվեցին ընկերները։

—————

Հակառակի պես այդ յերեկո հայրերը շատ ուշ վե-
րադարձան, յերեխանները տանջվում եյին անհամբերությու-
նից, կապել եյին հացը, վերցրել սապոն, ատամի փոշի, իսկ
ամենակարենորը՝ ատրճանակը մնում եր։

Շուշիկը սպառբառուել եր դեղ, վիրակապ, սպառում
էր, վոր Արտոն կանչեր. «Կու-կու»:

— Եույսը հանգըրու, քնիր,—ասաց մայրը:

— Յես հայրիկին եւծ սպառում, ուզում եմ, վոր թվա-
րանական խնդիրներս սպառուի, — թոթովից Շուշիկը:

— Նա այսոր շատ ուշ է դալու, զյուղերն ե զնացել
վեր:

— Քոնս չի տանում:

— Ի՞նչ ե սպառահել, — անհանգստացավ մայրը:

— Ի՞նչ պիտի սպառահի վոր...

Նա զիամամբ նախում եր սպառապին, վոր քունը շր-
տաներ:

— Կու-կու, զեհ, շուտ կանչեր, ելի..

— Ա՛յ Գուրգեն, ժամի տառերկուօն և արդեն, սպառ-
կիր, վոր սպառավար շուտ վեր կենաս, զպրոցից շուշու-
նաս, — համոզում եր մայրը:

— Դու յես ամբողջ որը լվացք արել քեզ և հարկա-
վոր հանդստանալ: Դու քնիր, իսո ես ե, կապուկեմ, ազնիվ
խոսք, կպառկեմ, — հավատացնում եր տղան:

— Դե, վեր, վեր: Ուրիշ ժամանակ տասին եյիր սպառ-
կում, այսոր ինչ ե սպառահել:

— Ի՞նչ պիտի լինի... Հենց այնպես սպառում եմ, վոր
հայրիկը զա, զուոր բաց անեմ:

— Նա բանալի ունի: Բնիր:

Բնիր: Յեթե Գուրգենը քնիր, բա ով ճանապարհ ընկ-
ափ զիշերով:

— Զես լուսմ, այ աղա:

Գուրգենն զգաց, վոր մոր ձեռքից հեշտ չեր ազատվելը:
Սպիալված հանգըրեց լույսը, մոտեցավ անկողնուն:

Պապիկը քնեց, զարթնեց, ելի քնեց, զարթնեց, իսկ
թունիկը նստել եր գեռ:

— Արտօ ջան, ժամի մեկը խփեց, քնիր:

— Դաս եմ սովորում, պապի:

— Գիշերով շատ վոր կարդաս, աչքերդ կցավի:

— Վոչինչ... Բա դու, ինչու չես քնում,—մեղմ խո-
սակցությունից մեկն հարձակողականի անցավ Արտօն:

Նըան հուզում եր պապիկի արթուն լինելը: Ուրիշ ժա-
մանակ խոմիոցը կցցեր և թեկուզ թմրուկ զարկեցիր ական-
չի տակ, չեր լսի...

Այսոր տմեն ինչ հակառակն ե, պապը չի քնում, հայ-
բեկը չի գալիս:

— Պապի, յես լույսը հանգցնում եմ, վոր քնեմ, ինձ
ել չխռուցնես. մի...—զայրույթը հազիվ զապելով ասաց նա:

Քիչ հետո հայրեկը յեկավ, նա չափազանց հոգնած եք
յերեսում, առանց ընթրելու պառկեց և մի քանի ըովե չան-
ցած, լովեց նրա խաղաղ շնչառությունը:

Արտօն կատվի զգուշությամբ իջավ մահճակալից, թա-
թերի վոր մոտեցավ հորը:

Նա շատ լավ գիտեր, վոր հայրը պառկելիս, առրճա-
նակը պահում եր բարձի տակ: Մթության մեջ խարխտ-
փելով, նա շոշափեց հոր անկողինը, բարձը և ձեռքը դի-
պավ ինչ վոր սառը բանի... Նա և վախեցավ և գողաց
հրձվանքից:

Զերևալու համար պազեց հատակին ու կամաց-կամաց
քաշեց առրճանակի գոտին: Նա մեկ շնչում եր, մեկ շնչ-
չը պահած ականջ դնում հոր շնչառությանը:

Չե: Ամեն ինչ լավ եր ընթանում: Վազեվորված նա
այնպես ամուր ձգեց, վոր առրճանակին ընկավ հատակին:

Ազմուկի վրա հայրը զլուխը բարձրացրեց: Արտօն
առրճանակը զրկած վախից սողաց մահճակալի տակ: Հայրը
կիսաքռւն ինչ վոր վնթինթաց, ելի պառկեց: Ցղան զգու-

շամթյան համար դեռ գուշա չեկավ։ Նա սպասում եր, զոր
հայրը նորից քնի։ Շտապելու կարիք չկար։ Ամենակարե-
վորն այն եր, զոր արգեն ատրճանակը վերցը ել եր։

— Դեռ, փաշիստներ, ձեռներդ հեռու հանրապետա-
կաններից, —ուրախ մտածեց նա, բայց հանկարծ ընկավ տրա-
մադրությունը... Բա զօր հայրը զարթնելիս ատրճանակը
չգաներ... Բա զօր զբա համար կուսակցությունից նկա-
տողություն ստանար... — Զե, չի կարելի հայրիկի ատրճա-
նակը վերցնել, իր վարժունքը դատապարեց Արտոն. — ո-
վելի լավ ե պապիկիս դաշույնը վերցնեմ, պապիկս ծեր ե.
Կրան ել ինչի՞ն ե պետք, մեկ ել զբա համար նըսն զոչ
զօք նկատողություն չի անի...



"ՀՐԵՂԵԼ ՉԻՆ,"

...Աւ նրանք ճանապարհ ընկան...

Քնել եյին մեծերը, քնել եյին փոքրերը, Փողոցներում վոչ վոք չկար, բացի յերեք հերոսներից: Նրանք և՛ քայլում եյին, և՛ շատ անելուն պես դուխները կախում, վոք շինի թե ծանսիթ մարդ դուրս գար, ճանաչեր իրենց:

Յերբ քաղաքը մնաց սարի կռնակին, նրանք նոր հանգիստ չնշեցին, սակայն կարմիր քույրիկը հոգնել եր արդեն...

Գուրզենոր մտածում եր, թե ինչ կասեյին ծնողները, յեթե նրան անկողնում չտեսնեյին: Նույնը խորհում եր նաև Արարն, բայց կիտմամբ այդ մասին չեր խռառում:

— Տղերք, հո չեք հոգնել,— լուսիթյունը խզելու համար հարցըց նա:

— Զե, չե, ինչ ես ասում... ինձ թվում ե, թե գեռ նոր եմ դուրս յեկել ասնից, — նկատեց Շուշիկը, վոտները հաղիվ-հազ քաշ տալով:

— Յեթե հոգնել եր, մի քիչ նստենք, — առաջարկեց Գուրզենը:

— Ուրախությամբ, մեծ, մեծ ուրախությամբ, — իսկույն
համաձայնվեց Շուշիկը:

Գիշերը լուսնիտ յեր, յերկնքը պայծառ: Ծառերը
յերկար ստվերներ եյին զցել: Այնովես խաղաղ եր շուրջը,
ծաղիկների բուրմունքից ոդն այնովես խտացած եր, վոր
յերեխանների աչքերը փակվում եյին... Քնել, թեկուզ հինգ
բուզե, յերկու բուզե: Բայց վաչչ չեր կարելի, բուզեն կարող
եր ժամ գառնալ, ժամը՝ ժամեր, մինչդեռ շարժվել եր
պետք:

Զորում խշում եր գետակը: Նա մերթ ցույց եր տա-
մս իր արծաթյա գոտին, մերթ ոճի նման գալարվում գե-
պի ժայռերի յետեր:

Շուշիկի սատները դուրս եցին ընկել ծակ կոշիկներից,
շփոթվելուց նորերի փոխարեն հագել եր հները: Ճանա-
պարհին և՛ քար և՛ փուշ, արնոտել եյին խեղճի վոտները:

Նա ուզում եր լալ... Աչքերն արդեն լցվել եյին, մեծ
դժվարությամբ եր զսպում իրեն, վոր ընկերները չնկատեն:
— Սրտո, ճիշտն ասա, դեռ շատ կտ մինչեւ կանաչ
դաշտերը:

— Ենէ, մեր կարմիր քույրիկը լաց և լինում, — հիան-
թափվեցին տղաները:

— Ցես լաց չեմ լինում, — կարմիրեց Շուշիկը, — յերը
շատ եմ ման դալիս, աչքերս արցունքով լցվում են:

— Դա շատ հիմար սովորություն ե, — նկատեց Գուր-
գենը:

— Գուցե ուզում ես յետ դառնալ, — խորամանկո-
րեն ձայնեց Սրտոն:

Շուշիկը սարսափած փաթաթվեց նրան:

— Գիժ, յես հոգնածությունից եմ լալիս:

— Բա ոյզպես պիտի իսպանիա համնես:

— Գիժ, յես ցրտից եմ լալիս, — ավելի խճճվեց աղջիկը:

— Ցաւրտ, — բա այդպես պիտի պաշտպանես հանրա-
պետականներին, — նախատեցին տղաները:



Եռաշիկը ճիզ արակ և արցունքների միջից ծիծաղեց:

— Գիտ, յես իսպանիա գնալու ուրախությունից եմ
լավիս:

Մութը քաշվեց, լուսացավ: Զարթնեցին մարդիկ, քննեցին մեր հերոսները: Միջավայրն ոտար էր, ծանոթի հանդիպելու վախ չկար:

Յերազում նրանք տեսան ծնողներին, այնպես տխուր եյին մայրերը... Հայրերը հուղված զանգահարում եյին միլցիա. վնասում եյին կորած յերեխաներին:

Ախր չգիտեյին, չգիտեյին ծնողները, թե ինչորես եյին կանչում իրենց իսպանացի մանուկները:

— Յեկեք, շուտ-շուտ յեկեք...

Արտօն վոչ միայն լսում եր նրանց կանչը, այլև տեսնում, այս, տեսնում եր, թե ինչպես լացակումած մանկիկները պարզել եյին իրենց թաթիկները:

— Գալիս ենք, գալիս,—զգացված բացականչեց ու ապա ընկերներին ասաց.

— Նստենք, մի-մի յերկտող գրենք մեր ծնողներին, — առաջարկեց Արտօն:

Նրանք գրալաններից հանեցին թուղթ, մատիտ, գրեցին:

Վերջացնելուց հետո հանգիստ սրտով շարունակեցին ճանապարհը:

Զորում հսում եր մի գետ:

— Կամուրջը վինառենք, — ասաց Գուրզենը:

— Շատ ժամանակ կանցնի, — հակառակեց Արտօն:

— Բա ի՞նչ անենք:

— Լողալով անցնենք:

Կարմիր քույրիկն այնպես խեղճացած նայեց տղաներին, վոր նրանք անմիջապես հարցրին:

— Դու լողալ չգիտե՞ս:

— Վճչ:

— Բա ինչու մինչև հիմա չես սովորել:

Շուշիկը գեռ չեր պատասխանել, յերբ Արտօն տեսափ, վոր կանաչների մեջ արածում ե մի ձի, խոտերի մեջ պառկած քնել եր աերը: Զգուշության համար ձիու պարանը կապել եր ձեռքից: Տիրոջ բերանը բաց եր, ճանճերը համարյա յելեվինդում ելին:

— Ի՞նչ եք կարծում, լավ չի լինի, յեթե այդ ձին նըստենք ու գետն անցնենք,— շշնջաց Արտօն:

Շուշիկն իր կյանքում դեռ ձի չեր նստելու նա սովորանեց, բայց վախը ցույց չտալու համար, ասաց:

— Իհարկե վատ չի լինի... Սակայն տերը կարսղ ե չհամաձայնվելու «Յերանի չհամաձայնվի», — ավելացրեց նու մաքում:

— Մենք տիրոջը չենք հարցնի, ի՞նչ վատ բան ենք անում, վոր... — Խոսեց Գուրզենը, զանակով կկտրենք ձիու պարանը, իսկ տիրոջ ձեռքին կդնենք մի յերկտող:

Այդ միտքը չափազանց դուր յեկավ Արտօյին, նա ընկերներին առաջարկեց գնալ գետափ, իսկ ինքը գրեց:

«Պապի ջան.

Կարճ ժամանակով վերցնում ենք ձին, կհեծնենք, դուրս կդանք մյուս ափը և հետ կուզարկենք Չարթնելիս մեզ չհայհոյես, մենք լավ բալիկներ ենք:

Այ պապի, սրանից հետո վոր քնես, բերանդ փակ պահի, թե չե ճանճերը մտնում են՝ յելնում, ափը նրանք կեզտու են, հիվանդություն են տարածում... ԴԵՒ, առայժմ ցանկանում ենք քեզ ավելի խոր քուն...

Մի խումբ նանապարհողներ»:

Նա յերկառողը խնամքով ծալեց, դրեց գյուղացու դեմք վրա, ապա ձին կամաց-կամաց դաշտից հանեց:

Յերբ նա արդեն բավականին հեռացել եր, յատկեց
ձիու վրա և չորքոտանուն մի պահ հրեղեն ձի յերեակա-
յելով, իսկ իրեն՝ Սասունցի Դավիթ, մտըակը ճռճեց:
Սակայն ձին վոչ միայն հրեղեն չեր, այլ և կույր...
ու կաղ...

Արտոն հիասթավիված զլուխն որորեց: Յերբ մտեցավ
ընկերներին՝ Շուշիկի սիրաը թպրտաց...

Չնայած նա ժապաւմ եր, ուակայն տղաները շատ լավ
հասկացան նրա վախըւնքանը հեծան, ապահովության հա-
մար կարմիր քույրիկին նստեցրին մեջտեղ ու ձին քշեցին
դեռվի գետը:

— Դեհ, կույր և կաղ. քեզ աեսնենք, — անվստահ բացա-
կանչեց Արտոն:

Ձին մտավ գետը Յերեխաները սիրտ առան, Շուշիկը
մինչեւ անգամ ծիծաղեց:

— Դեհ, դեհ, — խրախուսեցին մեր հերոսներն ու յե-
րեք զույգ վոտք չափով զարնվեց ձիու կողերին,

Ձին գնաց, գնաց, հանկարծ յերերաց:

Շուշիկը վտխից ամուր զրկեց Արտոյին, Գուրզենը
կախվեց չորքոտանու պոչից: Արտոն մի կողմից ընկերու-
հուն բռնած, մյուս կողմից սանձը, աշխատեց հավասարա-
կըշությունը չկորցնել:

— Դեհ, դեհ...

Ձին ուղղվեց, մի քանի քայլ արավ, նորից սայթա-
քեց և այս անգամ վերջնականապէս նստեց գետի մեջտեղը:

Ալիքներն բռպեյապես շրջեցին մեր հերոսներին: Ար-
տոն սքամնչելի լողալ գիտեր, նրանից յետ չեր միում Գուր-
զենը, իսկ մեր եր, մեր, մեր կարմիր քույրիկը...

— Զլինի ձիու տակն ե մնացել, — սարսադիած հարց-
րին տղաները:

Զկար:

Նրանք զայրույթից ուժեղ հարփած տվին անպիտան
ձիու չոր կողերին: Զորքոտանին կանգնեց, գեղի յետ լողաց:

Ռւըիշ ժամանակ լիներ, յերեխաներն անպայման կը ծիծաղելին այդ կենդանու վրա, բայց հիմա այդ չեր հետաքրքրողը հարկավոր եր փրկել ընկերուհուն:

— Շուշիկ, վնրտեղ ես...

— Ա՞-այստեղ եմ... խեղգվում եմ,—լսվեց թույլ պատասխան:

Տղաները սրտառորով լողացին դեպի աջ, չդատան: Լողացին դեպի ձախ, չդատան: Բոնեցին ինչ վոր բան, ձկնորսի զգդգված ուռկան եր...

— Շուշիկ...

Այս անգամ արձագանքող չեղափ: Վորոշ տարածության վրա ջրի յերեսին պղպջակներ յերևացին:

— Այստեղ կլինի, — գուշակեց Արտոն:

— Զեռք եմ բոներ, — բացականչեց Գուրգենը:

— Իսկ յես՝ վատք:

Ու քաշեցին, քաշեցին, քաշեցին, Շուշիկի տեղ ստուծ գիտել հանեցին...

— Խեզդվել ե, — ալայլվեց մեկը:

— Ռւշաթափված կլինի, — յենթազրեց մյուսը, — կախենք, թող ջուրը թափիվ:

Այդ միտքն ուժ տվեց նրանց: Բարձրացը ին, գըլուխին ի վայր կախեցին կարմիր քույրիկին, սկսեցին ճոճել:

Ինչպես ծանրացել եր նա, այդ բարակիկ, փիրուն աղջիկը: Զուըը ջրվեժի պես եր զահալիթում նրա բերանից:

— Այդ յերը ամբողջ գետը խմեց, — ակամա ծիծաղեց Արտոն: Ապա պառկեցը ին նրան, շփեցին մարմինը:

— Ամուր, ամուր, մի վախենա, — վողեվորվեց Գուրգենը:

— Ես ով ե իմ մաշկը քերթում... Ինչի՞ համար եք քերթում, — թույլ ձայնով բողոքեց Շուշիկը:

— Վայ, կենդանի յե, կենդանի, — ուրախությունից վստոսաեցին տղաները:

Շուշիկը նայեց ընկերներին: Նրանց սարսափը թեե անցել եր, սակայն դեռ զունատ եյին: Յերկում եր, վոր շատ եյին տանջվել իրեն փրկելու համար: Նա ժպտաց, առա մռայլվեց: Լավ չեղավ Դրանից հետո տղաները նրան թռւյլի տեղ պիտի դնեյին... Հարկավոր եր մի կերպ պաշտպանվել:

— Դուք կարծում եյիք յես ուշաթափվել եյի... Իսկի յել չե, քնել եյի,—ասաց նա՝ դեմքը ծածկելով:

— Կարող ե պատահել... Ի՞նչ կա, կարող և պատահել, պատասխանեցին ընկերները: Զուկն ել ե ջրի մեջ քնում... Բայց գու սրանից հետո մայրիկիդ ասա, վոր քեզ թողնի լողալ սովորես, թե չե, մի անգամ ել վօր այդպես քնես, ել դժվար թե զարթնես...

Շուշիկը խոսակցության նյութը փոխելու համար, ասաց, վոր քաղցած ե, քաղց զգացին և տղաները: Մոռացվեց պատահած անախորժությունը:

— Դուք նստեք, խնդրում եմ նստեք, հիմա յես եմ ուզում ձեզ սպասակար լիներ,—աշխուժ նկատեց կարմիր բույրիկը, մեջտեղ ըերելով մթերքի կապոցը:

— ԴԵհ, սկսենք:

Ուտել... Բայց ի՞նչ ուտել... Շաքարը հալել եր, աղբթափվել եր, ավել հացին: Հացը դարձել եր տարորինսակ գույնի խմոր: Խմոր լինելը բավական չեր, հետք միացել եր ատամի փոշին:

Տղաները դառնացած նայեցին իրար:

— Ճիշտն ասած, յես ախորժակ չունեմ,—ասաց Գուրգենը:

— Իսկ յես այնպես կուշում եմ, վոր կարծես նոր ես ճաշեր,—նկատեց Արտոն:

— Լավ, վոր ուտել չեք ուզում, թափեմ: Հարկավոր ե կապոցը լիմա, չորացնել,—ասաց Շուշիկը:

— Մի տանի, —սարսափած կանխեցին ընկերները, — թող մաս, հենց այնպես թող մաս...

— Ինչպես յես ջրում քնել եյի, այնպես ել դուք եք կուշա, — զվարթ քրքջաց աղջկլը, մատը տղաների վրա թափահարելով: — Յեթե աղը տվել ե հացին, իմ կարծիքով դա վնասակար չե, շատ-շատ պիտի քիչ ավելի ջուր խմենք: Յեթե հացի հետ խառնվել ե ատամի փոշի, դա ել վնասակար չե, ընդհակառակը, մինչև անգամ հետաքրքրական և ատամի փոշատ հաց ուտելլը: Փոխանակ ուտելուց հետո մաքրելու ատամները, մենք միաժամանակ կկատարենք այդ աշխատանքը... Յեթե ուղում եք, առաջինը յես կսկսեմ, — համարձակ նկատեց Շուշիկը՝ բժշկի աղջկլը, ու խմոր հացից մի կտոր վերցնելով, ըերանը տարավ:

Նա այնպիսի ախորժակով կուլ տվեց պատառը և այնպիսի ազահությամբ ձեռքը նորից պարզեց սփռոցին, վոր տղաները չդիմացան:

— Կարծես ամենեին ել աղի չի, — ասաց Արտօն հացը ձամելով:


— Վաշ ել փոշատ... — ավելացրեց Գուրգենը:

— Ինարկե, չե, — հաստատեց Շուշիկը:

Նրանք մեծ հաճույքով նախաճաշեցին ու գտան, վորիրենց կյանքում այդպիսի համով հաց զեռ չելին կերել: Ուտելուց հետո պառկեցին ու մի լավ քնեցին:

Զարթնելուց հետո ասացին, վոր իրենց կյանքում այդպիսի հաճույքուտ անկողին և խոր քուն դեռ չելին զգացել:

ԲԱՆԱԿՆ ԱՅՈՒՍ Ե.



«Հաճելի» նախա-
ճաշից ու սքանչելի
քնից հետո, նրանց
տրամադրությանը
բարձրացավ։ Ճա-
նապարհը շարունա-
կեցին։

Արտոն այնպես
վոգեվորված պատ-
մում եր Սասունցի

Դավթի մասին, վոր ընկերներն ամենեին չնկատեցին, թե
ինչպես իջավ մռաթը և ինչ վոր շներ կատաղի հաջոցով
նրանց գեմ յելան։

Շուշիին ահից կծկվեց, բայց ծպտուն չհանեց... Յեթէ
շունը նրան զզզեր ել, մինույն ե, լուռ պիտի մեար-
չերիք, ինչքան աղաները ծաղրեցին նրա վախկոտությունը։

Ճանապարհորդները նկատեցին մի տուն։ Շենքն ու-
ներ յերկաթաղատ պատուհաններ։ Դուն մոտ կանգնել եք
միլիցիոներ։

— Անպայման բանտ ե, — յեղբակացրեց Արտոն, — յեթե
մեզ նկատեն, լավ չի Յեթէ մեզ մոտ զինք գտնեն, ավե-
լի վատ, Միլիցիոների աշքը սուր ե, այդպիսի բան շուտ
կտեսնի... Յեթէ չտանենք փորաեղ ենք գնում, մեզ կը ըռ-
նեն, յեթէ խոստվանենք, յետ կուղարկեն։ Հարկավոր և
ճանապարհից շեղվել։

Յեկ նրանք կուզե՞-կուզ անտառ մտան:

Չնայած պարզ յերկնակամարի վրա ուրախ թարթում
եյին աստղերը, բայց անտառում մութ եր: Յերեխաները
հազիվ եյին նշմարում շավիդը:

Նրանք խարխափելով քայլում եյին, յերը ինչ-վոր
շշուկ լսվեց: Դիտեցին շուրջը, վոչինչ չտեսան: Թաջալեր-
ված մի քանի քայլ առաջ գնացին, նորից շշուկ լսեցին:
Այս անգամ արդեն վորոշակի, մարդկային ձայն:

Գուցե ավաղակ եր անտառում, չար մարդ...

Նրանք պահմիեցին ծառերի յետեւում: Սրտոն բնագ-
դաբար ձեռքը տարավ դաշույնին:

— Ասլան, կարծես մարդ լինի անտառում, — լսվեց
անհամարձակ մի ձայն:

— Ինչպես յերեւում և նրանք ել մեզնից են վախե-
նում, — խրախուսեց Գուրգենը:

— Սրբ սսս, մոտենում են...

— Ասլան, գանակդ պատրաստ ե:

— Պատրաստ ե:

Շուշիկը, չընկնելու համար, ամուռ զրկեց ծառը.

— Սրտո, զենքդ պատրաստ ե:

Պատասխանի փսխարեն, Սրտոն հակառակ կողմից կորեց
կասկածելի մարդկանց ճանապարհը և դաշույնն սպառնա-
կան ցույց տալով, հրամայեց.

— Զեններդ վեր:

Յեկ փախից յերկու փոքրիկ յերեխա ձեռները վեր
բարձրացրին, Ասլանը և Զլֆեն...

— Միայն յերկու հոգի՝ յեր, — հիասթափված հարցրեց
Սրտոն:

— Այս... իսկ դուք, — հարցրին «թշնամիները»:

— Յերեք հոգի:

Կողմերը նայեցին իրար, ելի նայեցին, ապա քըշշըցին
միաժամանակ:

— Մենք ել կարծում եյինք...

Սաղարթների արանքից ներս թափանցեց լուսինը և

ծիծագեց:

— Դե, հիմի ասացեք, ինչ դործ ունեք անտառում զիշերսվ,—նետաքըըլվեց Շուշիլը:

— Մենք:

— Այս, դուք:

— Բա դուք ինչ դործ ունեք անտառում զիշերսվ,—պատասխանի փոխարեն հարցըց խորամանկ Զլֆեն:

— Մենք:

— Այս, դուք...

Յերկու կողմերը խորհրդավոր լսեցին:

— Իսկ ինչու համար եք դանակով զինված, — խոսեց Գուգգենը:

— Մենք:

— Դուք:

— Բա գուք ինչու յեք դաշույնով մտն դալիս, — ձայնեց Ալլանը:

— Մե-ենք:

— Այս, դու-մուք...

Կողմերը դարձյալ լսեցին:

— ԶԵ լինի, ասեք, թե ուր եք գնում, — այս անգամ հարցըց Արտօն:

— Մենք գնում ենք... Հենց այնպես գնում ենք, — կարճ կտրեց Ալլանը, — իսկ դուք...

— Մենք ել հենց այնպես գնում ենք, գեպի Աղվեսձոր:

— Դուք վաղուց եք անցել այդ գյուղը, յետ դարձեք, յետ, — նկատեց Զլֆեն:

— Վաշինչ, մենք առանց յետ դառնալու յել դուքս կը այստեղ, — խորհրդավոր ընդհատեց Արտօն, — դուք աշխարհապրություն անցնում եք:

— Անցնում ենք:

— Գիտե՞ք, վոր յերկիրը կոր եւ

— Գիտե՞ք,

— Ուրեմն, մենք կարող ենք Աղվեսաձորից գուրս դար, զնալ, զնալ, հասնել Յեվրոպա... Մաղրիդ... Յեվ ելի զնալ, զնալ, և տուանց վերադառնալու հասնել Աղվեսաձոր:

Ասլանն ու Զլֆեն աչքի տակով նալեցին իրար:

— Նշանակում ե դուք զնում եք, զնում, զնում, զոր հասնեք իսպանիա... Զի՞ լինի իմանալ ձեր նպատակը:

— Մենք իսկի ել իսպանիա չենք զնում: Ո՞վ ասաց, ձեզ, մի ասաց, վոր մենք այստեղ ենք զնում, — հուղված պաշտպանվեց Շուշիկը, — լոողն ել պիտի հավատա, վոր մենք... իսկապես զնում ենք իսպանիա, ոգնելու հանրապետականներին, վոր ֆաշիստները ջարդվեն:

— Այ, մենք ել հենց զրա համար ենք զնում, — անըդդուշությամբ խոսք փախցրեց Զլֆեն, — յես կլինեմ կարմիր քույրիկ, իսկ Ասլանը... Ասլանը վոչինչ... — կմկմաց նա, զգաւով բնկերոջ ծանր հայացքը, — մենք իսկի յել Յեվրոպա չենք զնում, մենք մեկնում ենք Բաթում, վոր նստենք նավ, հասնենք իսպանիա, — ուղղելու փոխարեն ավելի խճճակեց Զլֆեն:

Լուսինը նորից ծիծաղեց:

— Դե, լավ, լավ, մի վշտանա, սիրուն աղջիկ, մենք ել ենք զնում իսպանիա, — համարձակ հայտարարեց Արտօնու — Ուղարմ եք, միանանք, մեկտեղ զնանք, յերեք ելինք, հինգ դառնանք:

Կարմիր քույրիկներն իսկույն մտերմաքար գրկախռովնեցին, տղաները վերցրին իրար թեր և վոզեվորված առաջանցան:

Յերբ հասան կայտան, զնացքը դեռ շեր յեկել: Վեհացին ասմանկ, յելան կառամատույց:

Շուշիկն զրունում եր, յերբ մեկը զարմացած ձայնեց:

— Շուշիկ, զու այստեղ...

Նա յետ նայեց։ Ժպտալով մոտեցավ հոր ծանոթը։
— Բարե՛։ Ո՞ւր ես զնում Մենակի ես, թե՞ բժշկի հետ
Շուշիկն ուզում եր պատասխանել, բայց ինչ վոր հիւ-
շելով, այլայլված թոթովեց։

— Իմ անունը Շուշիկ չե...

— Այ չարաճճի, — ծիծաղեց ծանոթը, — բա վոր քա-
անունը Շուշիկ չե, ինչու վոր կանչեցի անմիջապես յետ
նայեցիր...

— Դա իմ սովորությունն ե, յես հաճախ եմ հենց
այնպես յետ նայում...

— Լավ, յենթագրենք, վոր դու Շուշիկ չես, բայց
տաս, ինը եմ, մենակ ինչ զործ ունես կայսրանում։

— Ինչու մենակ — վիրավորվեց աղջիկը, — յես...

Մոտեցավ Արտօն, ընկերուհու շփոթված դեմքին նա-
յելով, հասկացավ յեղելությունը, ասաց։

— Հասմիկ ջան, զնանք, հայրիկը, մայրիկը մեզ են
կանչում։ — Շուշիկն զգալով, վոր այլս մենակ չե, հանդիսա-
ժպտաց։

— Հասկանում ես, Արտ... Ար... Արմենակ, այս ըն-
կերն ինձ ինչ վոր Շուշիկի հետ և խառնում... Դու ասա,
յես Հասմիկ եմ, թե՞ Շուշան։

— Ինարկե, Հասմիկ։

— Այդ դեպքում ներողություն, — այլայլվեց թերիտա-
սարդը — Զեր քույրն այնքան նման ե բժշկի աղջկան,
վոր յես...

— Վոր գուք նմանեցնում եք... ի՞նչ կա, կարող ե պաշ-
տահել — ներողամիտ ժպտաց Արտօն, ըսնեց «քրոջ» թեր,
հեռացափ։

Յերիտասարդը գեռ զարմացած նայում եր աղջկա հե-
տեղից։ Այդքան ել նմանությունն... խոսակցությունը, քայլ-
վածքը, մինչև անդամ շորերը, Յերկու որ առաջ հենց այդ
շաբերով եր աեսել Շուշիկին։

Նա դեռ յենթագրությունների մեջ եր, յերբ Գշալեն
գնացքը յեկագ։

Յանապարհորդներն իրար անցան. Գուրգենը կանչեց
ընկերներին:

— Ի՞նչ եք կանգնել, շուտ առաջ անցեք, Զգիր, Աս-
լան, Արտո, Շուշիկ: Շուշիկ վորտեղ ես:

— Այստեղ եմ, զալիս եմ,—բացականչեց Շուշիկը,
միանդամայն մոռանալով հոր ծանոթին:

Յերբ նրանք վագոն նստեցին, բժշկի աղջկեն ըն-
կերներին պատմեց պատահած զեպքը, ապա քանիքան
ծիծաղեց:

— Այդպես ել միամիտ մարդ կլինի... Խոկույն հա-
վատաց, վոր յես հասմիկ եմ... Յեթե չստեյխնք, նա կա-
րող եր ինձ յետ տանել...

Յերբ գնացքը շարժվեց, Շուշիկը վտանգը միանդամայն
անցած կարծելով, համարձակ նայեց պատուհանից դուրս ե..
նորից տեսավ հոր ծանոթին:

Ծանոթն սպառնական թափահարեց մատը Շուշիկի վրա
և մտավ հեռազբառուն:

Այդ վերաբերմունքն ամենեին, ամենեին դուր չեկավ
մեր կարմիր քույրիկին...

Գնացքը կանգնում եր կայարաններում, վերցնում նոր
ճանապարհորդներ ու ելի վազում:

Այս անգամ գնացք մտան յերեք յերեխա: Նրանք
ուսերին ունեյին միշմիշ տռպրակ:

— Սրանք ել մեզանից կլինեն, — շնչաց Արտոն ըն-
կերներին:

— Հա, — կիսաքուն ձայնեցին ընկերները և նորից փա-
կեցին աչքերը: Խեղճերը շատ ելին հոգնել նամանավանդ
կարմիր քույրիկները:

Յերբ նորեկները տեղափորվեցին, Արտոն ժպտալով
հարցցեց:

— Ամիսանազո, յոլգաշ, հարս գիղիք որդ:

— Առայժմ թրիկիսի յենք գնում, — կարուկ պատաս-
խանեցին նրանք:

— Հետո՞

— Բաթումի:

— Այնտեղից:

— Վոչ մի տեղ...

Արտօն, փոխանակ վիրավորվելու, նրանց պատասխանեց.

— Զեր պայուսակի միջից կացին և յերեռմ, չեք կարսող ավելի հարմար տեղ պահել:

Նորեկները շփոթվեցին: Արտօն առիթից ոգովելով անմիջապես հարցըրեց.

— Հիմա յել չեք ասում, թե ուր եք գնում:

Սոսիկոն նայեց Դոդիկին. Դոդիկը՝ Ահմեդին:

— Մենք գնում ենք իս... իս...

— Այդպես ել զիտեյի, — ընդհատեց Արտօն. — Ճեր ճանապարհը մեկ եւ հինգ եյինք, ութ դարձանք:

— Այ լավ բան, — վոգեկորվեցին նորեկները:

— Դուք կարմիր քույրիկ ունեք, — իսկույն հետաքրքրվեց Շուշիկը:

— Վոչ, մենք բոլորս ել տղամարդ ենք:

— Վոշինչ յերկու հոգի կանք, բավական ե, — սության հասավ Զլգեն:

Թե յերբ զարթնեցին աղջիկները, ինչպես լոեցին շշուկները, զարմացան տղաները:

— Լավ ե, նրանք մի աշքով կքնեն, մյուսով կհսկեն, չեն կորչի, — ուրախացավ Արտօն:

— Ապա, տոմսակ, ցույց տվեք ձեր տոմսակը, — լսվեց ուղեկցողի ձայնը:

Յերբ ստուգելու հերթը հասավ յերեխաներին, նա առաց:

— Դուք վաղուց պիտի իջած լինեյիք:

— Քեռի, մենք թրիկսի յենք գնում, դեռ չենք հաւաք, — բացատրեց Արտօն:

— Հապա ինչու տոմսը լրիվ չի հանված:

— Փողը պակասեց, զրա համար, քեռի, Մենք Թբիլիսի յենք գնում,—ասացին կարմիր քույրերը
— Խնչպես թե փողը պակասել եւ, Մենք մեր որենքն ունենք, խախտողներին կտուղանենք, — հայտարարեց ուղեկցողը: — Քանի հոգի յեք. մեկ, յերեք, հինգ, հիսուն ոռոքի առւգանք:

— Կոպեկ չունենք, ընդհատեցին յերեխաները:
— Վոր այդպես ե, իշեք:
— Խնչպես թե իշեք, — վախեցան յերեխաները, — մենք գնում ենք ե... ե... դիտեք, թե վորտեղ ենք գնում...
— Զգիտեմ, իմանալու յել կարիք չկա. — ասաց ուղեկցողը, — դԵհ վերցրեք ձեր կապոցները:

Յերբ գործն այդտեղ հասավ, Սոսիկոն, Ահմեդն ու Դոդին քըքըեցին իրենց զրպանները, հավաքեցին յեղած գումարը, սաացվեց ութ ոսւրլի յերեսունհիդ կոպեկ: Բայց դա քիչ եր, չեր վրկի զրությունը:

— Քեռի քո հասցեն, տուր, վոր հասնեք Թբիլիսի, մաացած փողը փոստով կուղարկենք, — խնդրեց Սոսիկոն:
— Դժվել են սրանք, — բարկացավ քեռին:

Յերբ գնացքը կանգնեց, յերեխաները դառնացած շած էջան...

Գնացին, գնացին, վերջապես հասան մի գյուղ: Կոլոբինակոտինները նրանց սիրով ընդունեցին:

Հետո սեղան բացին նրանց համար, բերին գաթա, թարմ կարագ, իսպանիա մեկնողներն աշխուժացած, նստեցին հացի, Առավոտից դեռ վոշինչ չեյին կերել և ճիշտն ասծ, հսդնել եյին շատ:

Նքանց կողքին նստեց գառնարած Սուրբկը:
— Ո՞վ եք, վնրտեղից եք դալիս և ուր եք գնում, — հարցրեց նու:
— Մենք եքսկուրսանոներ ենք, — ասաց Զլֆեն:

— Առանց զեկավարի...
— Չեր սարերում մենք կողը իրար,—կմկմաց

Մոսիկոս, կիջնենք ձորը, կմիանանք մեր խմբին...
Սուրբիկը խորհրդավոր ժպտաց, ապա լուրջ հարցրեց.

— Կարգացել եք այսօրվա «Պիոներ կանչը»:
Վիչ ի՞նչ կա, վոր...—հետաքրքրվեցին ճանապար-

Հորդները:

— Են կա, վոր Իսպանիայում կոփվը գնալով ուժեղանում ե... Մի քանի որ առաջ հանրապետականներն ելին ուժեղ, համա վերջին լուրերն ասում են, վոր խոռվարաբներն ելի սկսել են ոմքակոծել խաղաղ ժողովրդին: Յերեխանների դիակները...

Սուրբիկը չկարողացավ շարունակել արցունքով լցվեցին աչքերը:

Ճանապարհորդները սպրանած նայեցին իրար, նրանց ձեռներից ընկավ հացի պատառը:

— Վեր կացեք,—ասաց Արտոն:

Իսպանիա դնացողներն խոկույն վոտքի թուան:

— Եղ ուր հանկարծ,—զարմացան կոլտնտեսականները,—կերեք, հանգստացեք:

— Մենք արդեն կշտացանք, շատ շնորահակալ ենք,—թոթովեցին յերեխանները,—հարկավոր ե շուտ տեղ հաննել:

Նրանք բավականին հեռացել ելին դյուլից, յերբ մեկ ել հանկարծ հելլինեվ հասավ Սուրբիկը:

— Հասկացա, թե ուր եք գնում, շշնջաց նա, — յես ել եմ դալիս... Մազրիդի վրա գերմանական ինքնաթիռներ են յերեռում. Մազրիդին վասնդ ե սպառնում: Հետո վառոդ եմ վերցրել վառոդն ել ինքս եմ պատրաստել: Ինչ լսել եմ հսպանիայի մասին, խելքս վրաս չի... երեկ կուտնառնության վոչխարն եմ կորցրել, եսոր ել դառք... նկատողություն անեն տեղն ե...

Ու առանց սպասելու, թե ի՞նչ կպատասխանելին ճահապարհորդները, խմբի առաջ անցնելով ասաց.

— Եսպես յեկեք: Կարծ կտրենք, վոր շուտ համենք:

Հասան Թրիլիսի, նստեցին խորհրդի:

Ինչպես շարունակել ճանապարհը, առանց փողի...

— Թրիլիսիում այսքան մարդ կա,—ասաց Դոդիկը,—յեթե ամեն մեկից մի հինգ կոպեկ ուզենք...

— Ինչու, մենք հո մուրացկան չենք,—խոսքը կտրեց Առանը:

— Իսկ յեթե բացատրենք մեր փող ուզելու նպատակը,—ավելացրեց Գուրգենը:

Այդ եր պակաս, ուզում ես, վոր մեզ բռնեն, ճետ ուզարկեն,—ծիծաղեց Շուշիկը,—յես առաջարկում եմ դնալ աշխատել:

— Ո՞վ մեզ զործ կտա, բոլորս եւ յերեխա յենք:

— Բա ի՞նչ անենք:

Սոսիկոս ձեռքը ճակատին խփելով, ուրախ բացականչեց:

— Յես լավ լեռպինկա պարել գիտեմ:

— Յես ձեռների վրա կանդնել գիտեմ, խոկական ցիրկաչը պես,—հայտարարեց Առանը:

Դոդիկն ասաց, վոր թուչունի ձայներ հանել գիտե:

— Յես կյերպեմ Պեպոյի յերպը,—ձայնեց Շուշիկը:

— Մի բան եւ յես կանեմ, շմնզրլ-մշնզրլ-ֆոկուս,—առաջարկեց Զլֆեն:

Ու վորոշվեց զնալ փող վաստակելու, իսկ յերեկոյան համարվել կայարան, Բաթումի մեկնելու համար:

Յերեխաները վոգեվորված վոտքի յելան: Արտոն ըգուռը շշանջաց:

— Լավ կանենք, վոր մեր զենքերն աղջիկներին տանք, նրանց ծալ-ծալ շորերի տակից չի յերես:

Վաղ առավոտ եր. աղաները մտան մի բակ, գալանիք հանեցին դաշույններն ու ատրճանակները, աղջիկները զենքերը կապեցին իրենց վրա, զուրս յեկան:

Հասարակական պարտիզում մի բաց բեմ կար. իսպանիա մեկնողներն ասացին, վոր իրենք շրջիկ դերասաններ են ու յեկել են ցերեկույթ տալու:

Հանգստի որ եր, ժողովուրդն ուրախութեանը նայում էյին ձեռների վրա վազվող Ասլանին, թաշունի ձայներ հանող Դոդիկոյին, լսում էյին սիրելի Պետրոյի յերդը, տոմսակներ գնում:

Զգեն թիթեռնիկի պես թռչկոտում եր բեմի վրա ու ձեռների ճարմագիկ շարժումով մի բան վեր-վեր զցում, վոչինչ չեր զցում, սակայն հավատացնում եր, վոր վեր-վեր և զցում գույնգույն գնդակներ...

— Ջինզը՝ լ-մընզը՝ լ-ֆոկուս-մոկուս, այ... — բացականչեց նա, այս անգամ ողում ինչ վոր բաներ բռնելով, — ահա նրանք, մեծ ու փոքրիկ, ու ու կարմիր զնդակներ:

Նա այդ գործողությունը կատարում եր այնպես արագ ու այնպես թեթև, վոր հանդիսականները մնում էյին զարմացած:

Հետզհետե մեր հերոսներին շրջապատեցին բաղմաթիվ յերեխաներ. առաջացավ հանդիսականների այնպիսի մեծ բազմություն, վոր «դերասանները» դժվարությամբ էյին կարողանում նրանց կարգի հրավիրել:

Արտօն հանդես լեկափ, վորպես շունչկատու կովացնող: Նա այնպիսի վարդետությամբ եր հաջում, մլավում, վոր հավաքվեցին ջները, պատերի վրա յերեացին կատուները: Հաջողությունից խրախուսված, նա անցավ յերկրորդ համարին. մի քանի անգամ դագաղած վոռնաց ու փփաց

և իսկական շներն ու կատուներն արձագանքեցին նրան։
Թնդաց քրքիջը, հանդիսականները խնդրեցին կրկնել։
Արտօն յերկար սպասել չտվեց։
Փփոցի և մլավոցի վրա յերևացին նորանոր կատու-
ներ, վազելին յեկան կռվելու միշտ պատրաստ շները։
— Միա-նւ... միա-նւ։
— Հաֆ, հաֆ, հաֆ...
Ու կողան իբար։
Տպավորությունը կատարյալ եր։

Նատել եր Արտոն թաղամասում, ծանր հառաչում եր...
Կանգնել եր Շուշիկը պատուհանի տակ, նմանապես
հասաշում եր:

Վահ բարով արամվայ նստելին... ուզում ելին շուտ հաս-
նել կայրան, ի՞նչ իմանային, վոր փորձանք կպատահեր:
Տրամվայում շատ մարդ կար, պարզապես խեղդոց: Արտո-
յին հուղ տվին, սեղմեցին պատուհանին, մեկ ել շրջիկ,
ջարդվեց ապակին:

— Ո՞վ կոտրեց, ով, ով կոտրեց,—հարցրեց կոնգուկ-
տորը:

— Եյս տղան, ուե ժաղերով այս տղան, — պատասխա-
նեցին մարդիկ, Արտօյին ցույց տալով:

Տրամվայն արագ ոլանում եր, յերբ պատահեց փորձան-
քը: Արտօն Շուշիկի ականջին ի՞նչ վոր բան շնչաց ու-
ցած թռավ...

Նա կարծում եր, թե անցել եր վտանգը, յերբ շվաց-
րեց միլիցիոները, Կանգնեց արամվայը, իշավ պլովողնիկը,
կաղմեցին արձանագրություն ու միլիցիոները նրան տա-
րավ թաղումաս:

— Այ ընկեր, յես շրջանից նոր եմ յեկել, առաջին ան-
դամն եմ արամվայ նստում, ի՞նչ իմանամ ձեր քաղաքի
կարգ-կանոնը, — փորձեց արգարանալ Արտօն:

— Յեթե չգիտես, գնանք թաղամաս, այնտեղ կսովո-
րես, — հանգիստ պատասխանեց միլիցիոները:

— Ափը յես ճամբորդ մարդ եմ, իմ ճամբան շատ և
յերկար, ժամանակը վոսկի յե, բաց թող, գնամ:

Վոչի՞նչ, վոչի՞նչ չողնեց:

— կավ, մի ասա, տեսնենք, թե ինչի՞ տրամվայից չկ
կարելի թռչել, — հարցրեց Արտոն:

— Վարպիճեաւ թռչելիս կարող ես փոտդ կոտրել, կամ
ընկնել ավտոյի տակ:

— Իմ մահվան համար յես եմ պատասխանատու, գու
ինչու յես անհանգստանում:

— Ինչպես թե... բա դու մերը չես, պետությանը
չես, ափսոս չես, — բացատրեց միլիցիոները. — Քանի՞-քանի
յերեխաներ անզգուշության պատճառով կոտրել են իրենց
վոտքն ու այսոր փայտով են ման գալիս:

— Ճիշտ ե, ճիշտ ե, քեռի, — զգացվեց Արտոն, — ես
մի անզամ ինձ ների, ել այդպիսի բան չեմ անի:

Պատասխանի վոխարեն միլիցիոները ժպտաց. — Ժըլ-
տալով նրան մացրեց թաղամաս:

— Ինչ լավ, վոր զենքս Շուշիկին ավի, յեթե ինձ
խուզարկեցին, գտնեցին, կորած եցի յես ել, իսպանիան
ել, — մտածեց Արտոն, ուշիուշով զիտեց պատերը, ապա
մոտենալով պատուհանին, տեսավ Շուշիկին:

Շուշիկը կանզնել եր ծառի տակ և տիտուր նայում եր
լուսամուտներին:

— Այստեղ եմ... Այստեղ եմ. — զգուշ ձայն տվեց Ար-
տոն:

Շուշիկը նկատեց նրան, ուրախացավ, նշաններով ինչ
փոք բան հարցրեց:

Արտոն թեկերը լայն բանալով մի բան նկարեց:
Շուշիկը նշան տվեց, հեռացավ, Քիչ հետո նա յերեաց, ձեռ-
քին կանեփի թել, թել փաթթեց քարին, զցեց Արտոյին:

Արտոն թելի մի ծայրը բռնեց, մյուսը կախեց ընկե-
րուհուն:

Ուշ յերեկո յեր, անձրե եր տեղում:

Յեկավ մի կին, հովանոցը հենեց ծառին, զրպանից
հանեց փող, պարզեց լրագրավաճառին:

— Տվեք ինողրեմ ալսորվա համարը:

Այդ բովելին Շուշիկը զարմանալի արտգությամբ թեւը կապեց հովանոցի կոթին, չքացավ:

Արտոն հովանոցը վեր քաշեց:

Կինը գնեց թերթը, խնամքով ծալեց, դրեց գրպանը, ուղեց հովանոցը վերցնել, բայց գոռաց.

— Ախ, սրիկաներ, գողեր...

— Մորաքույր ջան, մի բովե, միայն մի բովե սպասիր, հովանոցդ ետ կստանաս,—խնողրեց Շուշիկը, նայեց թաղամասի դռանն ու միլիցիոներ չտեսնելով, նշան ավեց Արտոյին:

Արտոն յելավ պատշգամբը, բացեց հովանոցը... ցատկեց... իսկը պարաշյուտ...

Վուզելուց հովանոցը փակվեց. Արտոն զնդակի պես սուրաց ցած:

Նա իհարկե կղարնովեր սալահատակին, կվշրեր զլուխը, յեթե ծառերը ձեռների պես շրոնեյին նրան... Ազուակներն այդ նոր տիպի թռչունը տեսնելով սարսափած թռան ըներից, իսկ Արտոն մնաց ճյուղերի մեջ խճճված:

Շուշիկը վախից ծածկեց զեմքն ու հավատացած եր, վոր ընկերն արդեն ընկել եր գետին և թպրտում եր արյան մեջ...

— ԱՌԱՐՏՈՆ...—խուփ աչքերով փղձկաց նա,

— Վերե նայիր, լաց մի լինի, —ասաց Արտոն:

Շուշիկն անհամարձակ բարձրացրեց զլուխն ու վոստուաց ուրախությունից:

— Ցես ել կարծում եյի, թե մեռել ես...—բացականչեց նա:

— Չեմ մեռել, բայց...

Արտոն ուղում եր ասել, վոր չանգուտվել և ամբողջ մարմինը, վոր այնքան ել հեշտ չե ատմել այդ ցավը, սակայն չուզեց զցել սիրելի ընկերուհու արամաղբությունը:

— Լավ թռա, չե, —տանջանքը զսպելով ծիծաղեց նա:

— Շուտ... — ընկերոջը խրախուսելու համար համաձայնեց Շուշիկը. — դեհ, շուտ զնանք, վոր գնացքից չուշանանք:

Յերրորդ հարկից ցատկելուց հետո հեշտ եր ծառից իջնելը:

Զանցած մի բոպե զգդպված Արտօն կանգնեց Շուշիկի կողքին: Շուշիկն ուրախությունից գրկեց նրան:

— Արտօն, դեմքիցդ արյուն և կաթում, — հանկարծ վախեցած բացականչեց աղջիկը:

— Դա քրտինք ե...

— Քրտինքը կարմիր չեւինի:

— Իմը կարմիր ե...

— Հանեմ յոդ ու վիրակառ:

— Յեթե այսպիսի դատարկ բաների համար պաշարդ սպառես, բա հանրապետականների վերքն ել ինչնվագի պիտի կապես, — նկատեց Արտօն, — դեմքս ինչպես վոր չանդովել է, այնպես ել կանցնի, միայն թե հարկավոր և շտապել:

Յերրորդ կայարան հասան, ընկերներն ուրախացած վազեցին ընդառաջ և հարցրին.

— Վորտե՞ղ եյիք, ինչու այսքան ուշացաք:

— Պարաշյուտով թռչում եյինք... — պատասխանեց Արտօն, չանգոված դեմքն ստվերում պահելով. — իսկ ովքե՞ր են սրանք

— Մեր նոր ընկերներն են, — բացատրեց Աստիկօն, —

ինդուշ չուաշ չեշեն:

Արտօն հպարտ նայեց հետզհետե աճող բանակին ու թվաց, վոր մեկեն բուժվեցին մարմնի վերքերը:

Բարե քեզ, Բաթումի, միշտ կանաչ քաղաք:
Ի՞նչ կտպույտ յերկինք ունես: Ի՞նչ լայն և քո սիրալ,
ծովը անհունանհուն:

Բա ծաղիկները, նարինջները, լիմոնն ու թեյը քո:
Բա արմավենիները, բանանները, կակտուսները քո:
Եքսկուրսանտները զուր չեն սիրում քեզ և զուր չեն
զալիս ամեն ծայրից քեզ այցի:

Մեր հերոսներն զբաննում եյին ծովափնյա ըուլվարում,
ժպտում ելին հրճվանքից:

— Այս ի՞նչ սքանչելի տեղ ե,— բացականչեց Ար-
տոն, — յես առաջարկում եմ իսպանիայից վերադառնալիս
մի ամիս այստեղ հանգստանալ:

— Ճիշտ ե, սքանչելի տեղ ե, — արձագանքեցին ի՞նչ
վոր անծանոթ յերեխաներ:

Մերոնք նայեցին նրանց. իսկույն յերեվաց, վոր այդ
խումբն ել ե յեկվոր և մեկնում եր, այս մեկնում եր
այստեղ...

Նրանք խորհրդագոր զննեցին իրար ու բարեեցին:
Լայն ժպտացին նեղիկ աչքերով կալմիկները, դադախ-
ները, ուղբեկները, կիրզիզները, շշնջացին ի՞նչ վոր խոսքեր,
վորոնց իմաստն առանց բառերի ել հասկացվեց. Ու բո-
լորը միասին դիմեցին նավահանգիստ:

Այստեղ նրանք հանդիպեցին ելի յերեխաների, նաևըն-
ջազույն աջարների, արևադեմ արխազների, շեկիկ-մեկիկ
ուումների:

Սուր հայացքներով գննեցին իրար, մոտեցան դրամարկղին:

Յերբ տոմս գնելու հերթը հասավ Գուրգենին, նույնարդեց փողը, ասաց:

— Տվեք, խնդրում եմ... Տոմսակ տվեք մինչև ենտեղ...

— Վճրտեղ:

— Մինչև... Առսիկո, մինչև վճրտեղ, — շփոթվեց Գուրգենը:

— Զգիտես մինչև... Զժե, մինչև վճրտեղ:

— Այդ ի՞նչ ե, մենակ եք զնում, — զարմացավ տոմսավաճառը, մոլորված յերեխաներին նայելով:

— Վոչ, մենք զնում ենք ամբողջ խմբով:

— Այդ դեպքում կանչեցեք զեկավարին:

— Արտո, այ Արտո, այստեղ արի, շուտ, առանց քեզ տոմս չեն տալիս, — անհանդիստ ձայնեցին իսպանիա գնացող ներբ:

Արտոն, փոք մինչ այդ ջերմ զբուցի յեր ըռնվել աջար Գուրսունի հետ, լուրջ մեջտեղ յեկավ:

— Ի՞նչ եք կամենում:

— Զեր մեծին եմ ուզում, — դժգոհ նկատեց տոմսավաճառը, դեմք նույնպիս յերեխա տեսնելով:

— Յես եմ մեծը, — կարուկ պատասխանեց Արտոն:

Դիմացինը փռագելուց, ազգվելով այդ փոքր մարդու լուրջ արտահայտությունից, թե պարզապես ձանձրանալով յերեխաների ներկայությունից, կարճ հարցրեց.

— Քանի տոմս և մինչև վճրտեղ:

— 55 տոմս, մինչև Ստամբուլ:

Տոմսավաճառը, փոխանակ փողը վերցնելու, շրմիալեն պատուհանը փակեց:

— Խանգարում են, պարզապես խանգարում են այդ գաճաճները: Զես թողնում հանգիստ աշխատել, — լսվեց ներսից նրա հուզված ձայնը:

Յերեխաները զարմացած նայեցին իրար։ Ի՞նչ վաս
բան ասեցին, վոր «մորաքույթն» այդպէս գոռաց նրանց
վրա... Հարցը քանի տում և մինչև վնրտեղ։ Պատասխա-
նեցին. 55 տում, մինչև Ստամբուլ։ Տնմա չկա, քաղաքավարի
հայտարարիր՝ չկա, Ել պատուհանը շրմիացնելը վնրն և

Արածն ուզում եր պատասխանատվության յենթարկել։
այդ կողիտ ծառայողին, յերբ բարի դեմքով մի ծերունի
առաց։

— Ստամբուլն արտասահման և, չդիտեք, վոր չի կա-
րելի այստեղ գնալ։

Ցեվ առաջին անգամ իսպանիա մեկնողների առաջ
դրվեց այդ գժվար խնդիրը։

— Ի՞նչպես անցնել սահմանը...

— Պազի, Սև ծովը և մերն և, և տաճիկներին, չե՛—
հարցը Արտոն բարի դեմքով ծերուկին։

— Այս։

— Զի՞ լինի ասեք, թե վնրտեղ և վերջանում խորհր-
դային ջուրը և վնրտեղ և սկսվում բուրժուականը։

— Ողեսայում, — ծիծաղեց խոսակիցը։

— Իսկ Ողեսայից են կողմի անցնելու համար ի՞նչ և
պետք։

— Թույլավություն։

Արտոն մռաւըլեց. մեծ գժվարությամբ զան, հասնեն
ծովափ ու չկարսպանման շարունակել ճանապարհը. . .

— Ինչու համար ես այդպիս հետաքրքրվում, — հարցը ց
ձերունին։

— Ուզում եմ Ստամբուլ գնար պապի, թե կարող ես,
ողնիք, — խնդրեց Արտոն. — մալրս այնտեղ և, ծանր հիվանդ
ե... այնտեղ և... այնտեղ մեռնում են յերեխաները...
Կրանք թաթիկները պարզած մեզ... ինձ են սպասում. . .

Ու դողաց նրա ձայնը։

— Շատ եմ ցավում զանգրահեր բալիկ, — առաց ծե-

բունին,— բայց դժբախտաբար ողնել չեմ կարող: Թույլ-
տվությունը պետությունն և առաջ:

Սոսիկոն ընդհատեց նրանց զրույցը:

— Մինչև Ողեսա յել տում չեն տալիս, — վրդոված
հարտնեց նա, — տեղ չկա: Խսպանիա գնացողները շարվեցին
պատի տակ և նրանց համար փալուն ցերեկը մութ գիշեր
դարձավ:

Շշակը սուլեց, նավի սանդուխաները բարձրացրին,
խարիսխը քաշեցին: Շողենավը շարժվեց:

Ցերեխաները թաց աչքերով նայեցին լողացող «Լենին»
նավին:

— Գնաս բարով, «Լենին», բայց առանց մեզ ես գնում,
«Լենին», — մղկացին նրանք:

Մնացողներն այսպես կենարոնացած եյին հետեւմ
հետզհետե հեռացող փոքրացող շոգենավին, վոր ամենեվին
չզգացին, թե ինչպես հասարակությունը շրջապատեց նր-
անց:

— Ովքեր են սրանք, վորաեղից են յեկել, — հարցրին
մարդիկ միմյանց:

— Կարծես ազդային փոքրամասնությունների համա-
գումար լինի. ինչպես ել գտել են իրար...

— Այ Արտո, բա ինչ անենք, — խեղճացած ձայնեցին
ընկերները, — Արտօն շլսեց: Նրա ուշազրությունը դրավել
եյին միլիցիաներները: Նրանք ձեռներին հեռազիր ունեյին,
«Կորել ե... կորել ե... կորել ե...

Տասերկու տարեկան... տաս տարեկան... տասնմեկ տա-
րեկան... կալմիկ, չեչեն, հրեա: Հայ, աղբբեջանցի, վրացի:
Քյուրդ, յիզղի, տաորի: Թուս, կարարզին, թաթար: Ղազախ,
կազակ, ուզբեկ:

Կորել ե... կորել ե... կորել ե...

Շեկ մազերով կապտաշյա:

Սե մազերով թուխաչյա:

Նեղիկ աչքեր, գեմքը լայն:

Կորել ե... Կորել ե... Կորել ե...»

Միլիցիոներները հանդարա առաջ անցան, իբրև թե նաւում են ծովին, ալիքներին...

Վաստ նախաղղուշացումը ցնցեց Արտոյին:

— Տղերք, փառա-ախս...

— Փառախեք... — իրար նշան տվին ընկերները:

Նրանք մի քանի քայլ հազիվ եյին արել, յերբ միլիցիոներները շվացրին: Շվացի վրա, ասես գեանի տակից բուսան յեվս մի քանի միլիցիոները կազմեցին ողակ:

Ճարապիկները դուրս սողացին նրանց վոտների արանքից: Վոմանք թռան սկատից, մի քանիսը կատվի պես մազլցեցին ծառին, այնտեղից կտուր, իջան ինչ վոր բակ, այնտեղից ելի մազլցեցին, թռան ուրիշ բակ: Շները գազագած ընկան նրանց յետեվից: Իրարանցման վրա սենյակներից դուրս թափվեցին բնակիչները:

— Բանե-ցե-եք:


Խաղաղ Բաթումին ծովի պես ալեկոծվեց: Կարդ պաշտամանելու համար նորանոր միլիցիոներներ վազեցին:

Ու բռնեցին, բռնեցին, բռնեցին...

Մինչդեռ հեռազբատունն ելի հաղորդումներ եր ստանում:

«Կորել ե... Կորել ե... Կորել ե...»

Ուղարկել յետ... Ուղարկել յետ... Ուղարկել յետ...»



ԽՈՐՀԵՐՊԱՎՈՐ ԱՐԿԱՆԵՐԵ ՈՒ ԶԱՐՍԱՆԱԼԻ ՇՈՒՆԵ

— Հիմի կարող եք ել
չվաղել, մեր տանն ենք
արդեն, — ասաց Դուրսու-
նը. — բայց... Բայց ես ին-
չի յենք նման:

Պատերից շրջվելիս փո-
շոտվել եյին, ջրերից անց-
նելիս ցեխոտվել, ցան-

կապատերից թռչելիս պատռվել եյին նրանց շորերը և այժմ
կապատերից կախվել եյին, նամանավանդ Զլֆեյի և Շու-
ծվեն-ծվեն կախվել եյին,
շիկի շորերը:

Սրանն ընկերներին նայելով մռայլվեց:

— Լավ չի, վոր միտյն ես հինգս ենք ազատվել...

Վարտեղ և Ասլանը, Դոդիկը, մյուսները բա...

Սենյակում տնքում եր Դուրսունի մայրը: Նա ծանր
հիվանդ էր: Տղան առաջարկեց գնալ ներքնահարկ: Այստեղ
կարելի յեր և հանդստանալ և համարձակ խոսել անելիք-
ների մասին:

Յերեխաներն իջան ցած: Դուրսունը բերեց հաց, մի
քանի տասնյակ նարինջ: Ռւտելիքը դեռ սփռոցին չղբած՝
քացավ... Կաղդուրված ուժերով նստեցին խորհրդի:

Դուրսունն ասաց:

— Հայրիկս նարնջի պահեստի պահակն եւ նարինջ ար-

տասահման ուղարկում են մեռեծ արկղներով: Եղթեց առավոտ բարձելու յեն տաճկական նավը:

Նա լոեց, զգուշության համար ականջ դրեց դրսի ձայներին, ապա հաղիվ լսելի շշնչաց:

— Այս զիշեր իմ հայրիկն ե պահեստի հերթապահը: Նա ցերեկները սովորաբար քնում ե, վոր զիշերները լավ հոկի, բայց այսոր չի քնել, զիշերը կխռմիացնի:

— Հորդ քնելուց մեղ ինչ ոգուտ,—անհամբեր ընդհատեցին ընկերները:

— Հայրիկը վոր քնի, մենք համարձակ կդնանք պահստ, կդատարկենք մի քանի արկղ նարինջ, դուք կմտնեք նրանց մեջ, յետ ել կափարիչները կմեխեմ:

Յերեխանները ժպատացին:

— Առավուայան կդան բանվորները. կրաքանչն նարինջը, իհարկէն ձեզ ել նրանց հետ ու զբանից հետո նավը կդնա, կդնա, կհասնի Սաամբուլ:

— Եել ծովի անցնելուց հետո, մի կերպ ել Միջերկրականը կանցնենք, — շարունակեց Դուրսունը:

Յերեխանները վողերությանից ծափ տվին:

— Եդ բոլորը շատ լավ, — խսնեց Շուշիկը, — իսկ դու չես դա մեղ հետ:

— Իհարկէ կդամ, — հայտարարեց Դուրսունը:

— Բա ով պիտի մեխի քո արկղը,

— Եես այլ կերպ նավը կմտնեմ, — խորհրդավոր տապաց նա:

— Ավտոս, վոր չկան մեր մյուս ընկերները, — հառաւչեց Գուրզենը, — թե չե, նրանք ել մեղ հետ ճանապարհ կընկնեյին:

— Ո՞վ զիտե, զուցե նրանք ել հիմա զնալու պատրաստություն են տեսնում, — յենթադրեց Արտոն:

Պայմանները բարենպաստ եյին: Մուլին իջափ Յերեկինքն ամպեց: Լուսինն աստղերի հետ դիտմամբ պահպեց

ամպերի յետեր, վոր յերեխաները խավարում աղելի համարձակ գործեցին:

— Եռւ-ուտ, — շվացնում եր քամին:

Աղնում եր և ծովու Ալիքներն այնպիսի շառաչյունով ելին զարնվում ափերին, վոր խացնում ելին մուրճի հարվածները:

Իսկ հայրը... Դուրսունի հայրը խռմիում եր նստարանի վրա փռված:

Դուրսունը մթոն մեջ զարմանալի արագությամբ եր շարժվում: Պահեստից դտափ, բերեց հինգ մեծ արկղ, հատակին փռեց ծովային փափուկ խոտ, ընկերները խխունջի պես մտան մեջ:

Դուրսունը բոլորի կրծքին զրեց հաց, նարինջ, վոր եանապարհին քաղցած շման, կափարիչը ծածկեց, ոկուց մմեխել:

Քնօուշ կարմիր քույրերը հեշտ տեղափորվեցին իրենց նոր բնակարաններում, նմանապես աղաները: Արտօյի բանն ը դժվար, նա թիկնեղ եր, բարձրահասակ: Արկզը նեղ եր: Խոչքան կծկվում եր, մարմնի կեսը դուրսն եր մնում

— Յեթե մի քանի որ հաց չուտես, ո՛ո չես մեռնի, — հարցրեց Դուրսունը:

— Զեմ փորձել, բայց յեթե առիթ լինի, կաշխատեմ փողջ մնալ — պատասխանեց Արտօն, — Բ'նչ կա վոր...

— Յեթե խոստանում ես, ուտելիքը հանեմ, գուցե կափարիչը փակվի:

Արտօն մռայլվեց: Գժվար եր համաձայնովիլ ողայմանների հետ: Հեշտ չեր սրերով անհաց մնալ... Սակայն յերբ հիշեց, վոր խսպանացի յերեխաներն ել են քաղցած, ասաց:

— Դե լափ, թող այդպիս լինի...

Դուրսունը վերցրեց ուտելիքը, ամբողջ ծանրությամբ չոքեց կափարիչի վրա, սեղմեց, և արագ մուրճի ծանր հարվածներ իջեցրեց:



Աշխատանքը վերջացնելուց հետո, նա շտափ հավաքեց
գործիքները, շնչաց ընկերներին:

— Ուրեմն վաղ առավոտյան մենք կմտնենք նավը
Դուք, վորպես նարինջ, յես վորպես... Դեռ չգիտեմ ինչ:
Ինչ կերպարանքով ել վոր գալու լինեմ, միենույն ե, կդրու-
նեմ ձեզ: Յես կըկեսումն եմ աշխատում, զանազան միջոց-
ներ դիտեմ: Յերբ լսեք — ծուզուղմա, այդ յես եմ, հա-
վի պես կտկտացեք, վոր իմանամ թե փողջ եք:

— Մենք չենք մեռնի, — լսվեց արկղների միջից խուլ
պատամսան:

— Դեհ, առայժմ ցտեսություն, զնում եմ հօրս մոտ, վոր
քունը փախցնեմ, թե չե, կարող են նկատողություն աներ:

Լուսագեմին բանվորներն յեկան, կրեցին արկղները:

Տեղոն բեռնված նավի եր լարձրանում, յերք սանդուխո-
քի գեմ յեկավ մի այլանդակ մեծ շուն, բեռնակիրը փա-
խից յերերաց, կանակի արկղը շրբի ծովի ընկավ:

Արկղի մեջ Շուշիկն եր, կարմիր քութիկը: Զուրը
տախտակների արանքով իսկույն անցավ ներս: Աղջիկը
սարսափեց:

Նա զգաց, թե ինչպես իրեն դուրս հանեցին ծովից:
Փորձանքը թեհ անցավ, բայց այս անգամ ուրիշ անհան-
գուստություն տանջեց: Յեթե հանկարծ բանային արկղը...
գըստություն տանջեց: Կամ թե վարսաշեյին
ասելին-չորսացնենք նարինջները... կամ թե չուղարկել արտասահման... Այն
թրջված նարինջներն ել չուղարկել արտասահման... Այն
ժամանակ ընկերները գնային, իսկ ինքը, կարմիր քութիկը
ժամանակ ընկերները չեր, կակսեյին հարց ու
կմնար... Մնալը դեռ բավական չեր, կակսեյին հարց

փորձ աներ:

— Ի՞նչ նպատակով ես արկղ մտեր արկղն ով ե մե-
խեր ովքեր են ընկերներդ...

Յեվ յեթե ստուգելու համար բանային արկղները, գըս-
տնելին մյուսներին...

Ալդ գեղքում մնաս բարով իսպանիա, մնաք բարով
հանրապետական մանուկներ, ել չկան ձեր փրկիչները...

Սյստեղ Շուշիկն այնպես վշացափ, վոր ոկտեց լար...
— Ծուղ-բռւ-զնւ:

Աղջիկը լարեց լսողությունը: Դուրսունն եր, սիրելի
Քուրսունը:

— Կը-ա-կը-տ-կը-տ:

Դուրսունը մոտեցափ թաց արկղին: Եղ վար խեղճն
եր մեջը:

Նա զդուշ հարցրեց:

— Անունդ:

— Շուշիկ:

— Վայ, ջանիկ... աշխատիր չհիվանդանով. Փիդկուլ-
տուրայով պարապիր, վոր տաքանաբ:

— Այս արկղի մեջ, — ծիծաղեց Շուշիկը:

— Վոր ծիծաղում ես, նշանակում ե արամաղրությու-
նը լավ ե, ուրախացափ Դուրսունը. — ո՞ր ո՞ս... զալիս են:

Յերեվաց Տեղոն, գաղտագողի վերցրեց թրջված արկղը,
շտապ նավ բարձրացափ, Յեթե վարչությունն իմանար, վոր
նա թրջել եր արտահամնվող նարինջները, վայն յեկել եր
նրան տարել...

Վասոն շարժեց մի արկղ. զարմացած բացականչեց:

— Վայ-վայ, ես մեկն ինչ ծանը ե. ապա, վախ-
տանդ, ոգնիր, շալակս տուր:

Մոտեցափ ընկերը, զննեց արկղը, դժգոհ նկատեց:

— Հը, ենքան նարինջ են խցկել, վոր խուփը լավ չէ
փակվել. մուրճը բեր:

— Խփելով բան դուրս չի գա, — հակառակեց վասոն, —
յավն են ե բանանը, դատարկենք, չես տեսնում քիչ ե
մոռւմ կողերը պոկվեն:

Արկղում Արտօնն եր նա սարսափից սեղմեց ծնոտները:

Յեթե բանան կափարիչը. կհանեն իրեն կծեծեն,
չեն ծեծի, կդնան թաղամաս, կհարցնեն. — ինչի հպմար

Եյիր արկղ մտել և ով է ոգնել քեզ... Դեհ, յեկ ու պատասխանիր: Խոսառվանել նշանակում է մատնել ընկերներին:

Ու նա զառնացած մղկտաց:

— Մնաս բարով, իսպանիա, մնաք բարով մանուկներ,
ել չկան ձեր փրկիչները...

— Ծուղ-բուղմաւ:

Արտօն լարեց լսողությունը Դուբառունն եր. սիրելի
Դուբառունը:

— Կըտ-կըտ-կըտ,—խրախուսված կանչեց Արտօն:

— Կա-մաց, ականջներ կա-մ-ան...

— Բա-մ-ա... բառաչեց շոգենավը:

— Զենք հասցնի, — ասաց Վասոն, արկղն ինչպես կա,
հարկավոր և նույնությամբ ել բեռնել:

Ու տարան Արտօյին:

Յերեխաները, բացի Դուբառունից, առաջին անգամն
ելին նավ նստում, են ել արկղների մեջ մեխված... Մինչ-
դեռ նրանք այնպես, այնպես ելին ցանկանում տեսնել
դով, ալիքները ծփուն, ափերը կանոնչկանաչ... Տես-
բաց ծովը, ալիքները ծփուն, ափերը կանոնչկանաչ... Տես-
ներ, թե ինչպես արել հայելու նման շողապում և ջրի
յերեսին, ինչպես մեծ ձեները վազում են նավի յետեվից,
խել գելֆինները խումբ-խումբ պարում են ալիքների մեջ...

Խակ գառաչեցին փակարկներում. փակեցին աշքերը,
նրանք հառաչեցին փակարկներում. Գժվար եր իմա-
քնեցին: Զարթնեցին, դարձյալ քուն մտան: Գժվար եր իմա-
քնեցին: Նալ, զբառում գիշեր ե, թե ցերեկ անցել ելին սահմանը,
ամեն պատճեն ե, թե ցերեկ անցել ելին սահմանը, Ամենից շատնեղվում
թե գեսլողում են խորհրդային ջրերում: Ամենից շատնեղվում
գետ գետ լողում են խորհրդային ջրերում: Ամենից շատնեղվում

գրժելու յեր: Ընկերները մկան նման պաշար ելին կրծում նաց և
ամեն պատառը կուլ տալիս, հիշում քաղցած Արտօյին:
— Ուղարկ ես, մենք ել չուտենք, — ՀՀնջաց Զլֆեն:

— ԶԵ-Ե, կերեք, միայն թե . . . միայն թե . . . փոչինչ,
անուշ արեք: — լսվեց Սըտոյի թույլ ձայնը:

Նրա արամադրությունը վատ եր և նրա համար, վոր
Դուքսունն իրեն զգալ չեր տալիս: Չլինի՛ բռնել եյին, իջեց-
րել . . . ե ինչքան ժամանակ եր անցել, ինչ թողել եյին Բա-
թումին. բա ինչու գեթ մի անգամ չեր կանչում:

Մեկ ել հանկարծ —

— Ծնւղ-ընւ-ղճւ:

— Կը-տ-կը՛-տ-կը՛-տ, — Ժիր պատասխանեցին արկղները:
Սըտոն այնպէս վողեվորվեց ընկերոջ ձայնից, վոր ու-
ղեց դուրս նետպիել:

Նրա ուժեղ շարժումից դորվեցին վրայի արկղները,
ու շրփ-շրփ ընկան հատակին:

Աղմուկի վրա ներս վաղեց Հասանը:

— Ալմահ, — զարմացավ նա, — շուրջը պիտելով, —
ծովը խաղաղ ե, իսկ արկղները զորվում են, գեվ և մտել
մեջը...

Նա բարձրացրեց արկղները, փնթփնթալեն դուրս յե-
կափ:

Դուան մեջ նրան մոտեցավ անճոռնի մեծ շուն: Շան
յետելի վոտները հաստ եյին, տուաջինները՝ բարակ ու կարճ,
նա ցատկում եր ճագարի պես:

— Ալմահ — ալմահ, — բացականչեց Հասանը, — նավ և շուն:

Շունը հաճույքով վեգսաաց, շարժեց պոչը, քաքսեց
նրա վահներին:

— Ալմահ, շնորհքդ շատ, — շնչաց նա դուխը վեր բարձ-
րացնելով:

Առաջացան նավաստիները: Չորքոտանու ներկարու-
թյունը և զարմանք և հաճույք ոլտոնառեց նրանց:

Նրանք աշխուժացած շրջապատեցին կենդանուն, շոյե-
ցին, հաց ավին, շունը հոտոտաց, չկերափ:

— Կրթված ե, ուրիշի կրծածը չի ուտում, — ծիծաղեց

մեկը—**Ապա, թե կըթված ես, կանդնիր յետելի թաթեթիդ գրա:**

Շունը կըկնել չովեց, ձգվեց ամբողջ հասակով գեղի վեր ու առջևի թաթը ճակատին առնելով, բարե ավեց:
Նավաստիները շշմած սնացին:

— **Գուցե այս անգամ առջևի թաթերի վրա բարձրանաս,— հենց այնպիս առաջարկեց Հասանը, ինքն ել, իհարկե, իր ասածին չհավատալով:**

Շունն ակրոբատի նման յելակ ձեռների վրա, ապա զլխակոնծի տվեց:

Հանդիսականները բերանները բաց նայեցին իրար և յերք լույսը վտաեցին շանն ավելի լավ տեսնելու համար նու ել չկար...

Հասանը գտավ նրան պահեստում, նարնջի արկղների կուզբն, Գուշուր զբել եր թաթերին ու քներ:

Հասանը նայեց նրան, մտածեց:

Շանը կկերակրի, կհասցնի Ստամբուլ, կտա մեծ տղին:
Տղան կտանի բակերը, փող կվաստակի... Հասանն ունի մայր, կին, վեց յերեխա: Ստանում և այնքան, վոր տուն և տանում միայն սև հաց... հաճախ յերեխանները չեն քնում քաղցից... Նրանք թույլ են, քնքուշ ու գեղնած: Կինն ուղեց մանել գործարան, շընդունեցին: Յեղած բանվորներն են կրծատվում: Գործ չկա:

Մեծ տղան զողությամբ և զբաղվում: Գողությունը հորը պատիվ չի բերում, սակայն ստիպված և հաշտվել դրա հետ, չիմա շունը կարող և փրկել նրան:

Ու այդ մտքից պայծառացավ մոայլ Հասանը:

Նա զրովանից հանեց որապահիկ հացը, գողգողշուն ձեռներով յերկու կես արավ, մի մասն ինքը կերավ, մյուշը դցեց շանը:

Շունը բարձրացրեց գլուխը. յերախտազիտությունը փարվեց Հասանի վստաներին:

Զարմանալի շուն...



ՆԱՐԻՆՉԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵԼ...

Հաջորդ յերեկո անըսպասելիորեն յեղանակը վատացավ: Ծովի վրա սոսկալի փոթորիկ բարձրացավ: Ալիքները, մեկը մյուսից հուժկու, յեկան զարնվեցին նավին, ապա հասան հաջորդ ալիքները, ավելի կատաղի, ավելի փրփրուն:

Նավը խորտակվում եր...

Նավաստիներն անցան լարված աշխատանքի: Նավապետը մոռայլ կերպարանք ստացավ: Ծունն ականջները ցցած գաղվղում եր վերևից ներքե, վորնում դադաղած:

— Սատկեցնել այդ անսառունին,—վրդոված հրամայեց ավագ նավաստին,—ալիքների մոնչոցը կարծես քիչ ե, դա յեր պակաս...

Ծունը վախեցած պոչը կծկեց. հեռացավ:

— Ծռւղ-ըռւղ-դռւ:

— Կըտ-կըտ-կըտ,—պատասխանեցին արկղները:

Այդ ժամանակ լսվեց նավապետի խրոխս հրամանը:

— Նարինջները ծովը թափել, բեռը թեթևացնել:

Դուրսունը սարսափեց... Ծովը թափել նարինջները... Ասել ե ծովը թափել և իսպանիա գնացողներին...

Յեթե նա ընկերներին հայտներ լսածը, ընկերները վախից կարող ելին լաց լինել: Մարդիկ մեկնում են հանրա-

պետականներին պլաշտպանելու, դրա փոխարեն պիտի
իջնեն Սև ծովի հատակը:

Չե, փրկել ե պետք:

— Ծռւղ-բռւ-զմւ:

— Կըտ-կըտ-կըտ:

— Իմ ջան հավիկներ... Հիմա գալիս են, ծավը գցեն,—
զգուշացրեց նա, բայց միշ վախենա, հենց վոր մատենան
ձեր արկղներին, գոռացեք միարերան.

— Դուրս, դուրս, ձեռք չտալ մեղ, կսպանենք ձեզ...

Դուռը բացվեց. յերնաց Հասանը, Դուրսունն ինչ վոր
շշնջաց, պահից:

— Յոլգաշ Հասան, մի թող, վոր մեղ ծով թափեն, —
աղաչեցին «Նարինջներ»-ը:

— Ալլահ ալլահ—թոթովեց խեղճ աղրբեջանցին, — ավ ե
տեսել, վոր նարինջը խոսի, խոսի մարդու պես... Կործան-
միր, կործանմիր, գու չար սատանա:

— Վոչ սատված կա, վոչ սատանա, — հոհուացին ար-
կրղները:

Այս անդամ յերկյուղից Հասանի լեզուն կապվեց: Նա
շնչառակառ գուրս նետվեց պահեստից, ընկալ նավաստի-
ների մոտ, վոչինչ չկարողացավ ասել:

Ծովը գալարվում եր վիշապի պես: Նավը խորտակվե-
յուն մոտ եր:

— Թափե-ել նարինջները. շմւ-նւ-մւա...

Այս անդամ բանվորների հետ պահեստ վագեցին և
սավաստիները: Հասանը հասկացնում եր, վոր ներս չմըտ-
նեն, այստեղ չարքեր կան պահված, նարինջները խոսում են:

Լսողներից վոմանք ծիծաղեցին ցնորամիտ հավաքա-
րարի վրա, վոմանք հայնոյեցին, վոր այդ ճակատազրական
բոպեյին ապուշի մեկը փոխանակ ողնելու, խանգարում ե,
ապա զայրացած հրեցին նրան, ներս մտան:

— Յոլգաշար...

Նավաստիներն այլալվեցին:

— Դուրս, դուրս, —աղաղակեցին արկղները, —ձեռք
շապք մեզ, կսպանենք ձեզ:

Նավաստիները վախից յետ-յետ զնացին...

Հասանը վազեց նավապետի մոտ և կակազելով տապց
— Թույլ տվեք... Թույլ տվեք զեկուցելու... պահեռ
տում խոսում են նարբնչները...

Նավապետը վրդովված ապտակեց նրան:

— Ապուշ, յեթե աեղդ գժանոցն ե, ի՞նչ գործ ունես
նավի վրա: Ի՞նչպես թե նարբնչները խոսում են:

Հասանը զինվորականի պես ձգվելով, կրկնեց:

— Խոսում են նարբնչներն իսկական մարդու նման:

Նավապետն ել շսեց նրան: Տեսնելով հուժկու ալիք-
ները, կարգադրեց զցել խարիսխը:

Բնւմ, բնւմ, բնւմ... Ծով եյին նետվում արկղները...

Կարծես մեղմացավ փոթորիկը:

Հետզհետե խաղաղվեց ծովը, հարթեցին ալիքները,
դելֆիններն ելի ջրի յերեսն յելան:

Հանգարտվեց հույզը և նավի վրա: Հոգնած նավաս-
տիներն աղատ չնշեցին: Բանվորները մնացած արկղները
նորից իջեցրին պահեստը: Նավը լողաց հեզիկ-նաղիկ, կար-
ծես վոչինչ չի յեղել:

Տիրուք եր... Տիրուք եր Հասանը:

Ծեծում ենս...

Ծերացել եր, բայց աշխատում եր դեռ Նավի հա-
վաքարարն եր. խոհարարի ոգնականն եր, ամանները լվա-
ցող: Կարծես այդ քիչ եր, պահեստի մաքրությունն ել
եյին նրան տվել: Յեկ ի՞նչ եր ստանում, որական յերկու-
զուբուշ: Դժգնի ես, հեռացիր! Պաշտօնիդ աչք զնող այն-
քան, այնքան գործազուրկի...

Խորհրդային յերկում այդպես չեւ Նավը բարձելիս
շատ զարմանալի բաներ եյին պատմում աջար բանվորները:

— Ե՛ Եխ, Սլլահ, հոգիս առ, աղատվեմ, —թոխանձեց
նա վշտացած:

Յերբ ավելը վերցրեց, նորից խոսեցին արկղները:

Շուշիկն ասաց:

— Ա՛խ, յերանի շուտ համեյինք, ինձ թվում ե, զոր
մեանում եմ արդեն:

— Դու այնպես արա, զոր շթվա, ասա չեմ մեռնի,
չեմ մեռնի, ու չես մեռնի, —խրախուսում եր Զլֆեն, չսա-
յած ինքն ել նրանից պակաս չեր ձանձրացեր:

— Բա պատերազմ գնալը հեշտ բան եյիք կար-
ծում, —ծխծաղեց Սոսիկոն, —մեզ թվում ե, զոր մեռնում
ենք, միշտեռ խսպանիայում խսպակես են մեռնում: Մի
զիտե, հենց այս բոպեյիս քանի յերեխա յե թարտում
արյան մեջ...

— Շուտ համենաք, փրկենք նրանց, —անհամբեր պառթ-
կաց Արտոն:

Հասանը մտածում եր:

Ել զնչ մի կասկած, զոր խոսում են խոկական մար-
դիկ: Սրանք չարքեր չեն, չարքերը չեն տանջիվ արնա-
թաթախ յերեխաների համար... Չեն գնա խսպանացիներին
ոգնության: Այդ բարի մարդիկ մեկ չեն. խոսում են ձայ-
ներով և աղջիկ են և տղա, անսպայման մանուկ:

Այստեղ նրա միտքը խճճվեց:

Մանուկները չեն գնա պատերազմ, մեծերը չեն տե-
ղավորվի արկղների մեջ. բնչպես լուծել հանելուկը:

— Դուք, զոր այդպես գանգատվում եք, բա յես ինչ
ասեմ... ձեղանից մեծ եմ, խցկվել եմ փոքրիկ արկղի մեջ:
Թմբել ե վողջ մարմինս, — ձայնեց Արտօն, — ու մեկ ել...
մեկ ել ինչ Բաթումիում հաց եմ կերել...

— Վախ, վախ, խեղճ բալիկ — մղկաց Հասանը:

— Եզուց կհամենաք Ստամբուլ ու վերջ բոլոր չարչա-
բանքներին, — ասաց Դուրսոնը, — այդպես չե՞ Գուրդեն:

Պատասխան չեղափ:

— Զես լսում:

Ելի լոռություն:

— Գուրգեն, ինչտև ձայն չես հանում,— այս անդամ հարցըին բոլոր ընկերները,— ականջներդ բամբակ ես խրել: Վոչ մի պատասխան:

— Այսպես ել խոր քուն... Զլինի թե ծովն են դզել մեր Գուրգենին, սարսափած նկատեց Շուշիկը:

— Գուրգեն...

— Ա՛յ Գուրգեն...

Զկա՞ր:

Մի շարք արկղների հետ ծովն եյին նետել նրան...

Աղջիկները լաց յեղան... Տղաները դժվարությամբ զսպեցին արցունքները: Ու նրանց թվաց, թե արկղներն ամերի փոքրացան, սեղմվեցին ու ել ոդ չմնաց շնչելու:

— Յես առաջարկում եմ Գուրգենի հիշատակն անմահացնելու համար ավելի կատաղի կովել ֆաշիստների դեմ,— նկատեց Արտոն:

— Կովենք,— արձադանքեցին ընկերները:

Հասանը և լսում եր, և մտածում, ինչ անել... Տեղեկացնել նավապետին, վոր տաճկական նավով Ստամբուլ են դնում խորհրդային յերեխաններ... Նա պարտավոր ե մատնել նրանց,— այլապես, յեթե գաղտնիքը բացվեր, իրեն պատավիսանատության կենթարկեցին, կհեռացնեցին աշխատանքից, մինչդեռ տանը մայր, կին, յերեխաններ...

Նա գողգողակով կանգնեց, և այն ժամանակ նրա ուշագրությունը գրավեց մի նոր խոսակցություն:

— Այս նավի վրա մի քեռի կա, անունը Հասան: շատ լավ քեռի յե, ծեր ու բարի: Նավապետը ծեծել եր նրան, խեղճն այնովես տխուր եր... պատմեց Գուրսունը:

— Այս ինչպես, ինչպես կարելի յե մարդ ծեծել,

— հուզվեցին ընկերները,

— Յնս առաջարկում եմ յոլդաշ Հասանին վերցնել մեզ հետ, պաշտպանել նրան,— ասաց Շուշիկը:

— Ալիքելի՛ խորհրդային բալիկներ,— շշնջաց հասանը՝
Ամրողջ կյանքում գեռ վաչ վոք նրան չեր խղճացեր:

— Յոլդաշ հասանն այնպես զեղնած ե, յերեվում ե,
վոր ազգուստը վատ ե,— շարունակեց Դուրսունը: յերը
հասնենք Ստամբուլ, փող վաստակենք, նրան տանք:

— Անողայման, — համաձայնվեցին ընկերները:

Հասանը և ժպառում եր հրճվանքից և մտածում զար-
մացած: Այս ի՞նչ տեսակ հրաշք ե. արկղներում մեխված
յերեխաններն ի՞նչպես իմացան, վոր նավապետը ծեծել է
նրան... Այն ժամանակ միայն շունն եր ներկա, բայց շու-
նը հո լեզու չունե՞ր, վոր գնար ուրիշներին պատմե՞ր:

— Գուրսուն, — հարցրեց Սոսիկոն, — քեզ նավի վրա
խելի տեսնող չե՞ յեղել:

— Շատ...

— Բա ի՞նչպես քեզ չեն բռնում, — զարմացան ընկեր-
ները:

— Վորովհետեւ կարծում են, վոր յես... վոր յես...
թոթովեց Դուրսունը. Հասանին նկատելով:

— Վոր դու ի՞նչ:

— Մը ըստ...

Շունը զարթնեց, ծուլ-ծուլ ձգվեց, վնասալով
մոտեցավ Հասանին. Հասանը շոյեց նրա բրդոտ մազերը,
կուցավ արկղների վրա:

— Շնորհակալ եմ, բալիկներ, վոր այդպես սիրում
եք ինձ, բայց ասացեք ինդրեմ, ի՞նչպես եք կարողանում
փակ արկղներից տեսնել ինձ:

Պատասխան չեղավ:

— Ինչու չեք պատասխանում, չե՞ վոր յես լսեցի ձեր
դրույցը:

— Ի՞նչպես թե լսեցիր մեր զրույցը — բարկացավ Շու-
շիկո, — մենք նարինջ ենք, նարինջները չեն խոսում...

— Իհարկե չեն խոսում, — հաստատեց Զլֆեն:

— Միւր վախենա, ձեզ չեմ մատնի, — հավատացրեց

Հասանը,—դուք վոր ինձ այդպես պաշտպանում եք, լավ
բալիկներ եք: Թանի՛ հողի յեք:

Յերեխաները դեռ գժվարանում եյին հրաժարվել նա-
րինջությունից: Ո՞վ զիտե, դուցե Հասանը՝ զիտմամբ և այդ-
պես քաղցր անուշ խոսում, վոր հետո յել գնա քաղցր-ու-
նուշ մատնի:

Ներս մտավ մի նավասախ:

— Նավարետը կանչում ե,— հաղորդեց նա կարճ:

Հասանը գժգոհ գուրս յեկավ:

Շունը հետեւվեց նրան:

Մովի վրա փովել եր թանձր մշուշ:

Տիուր եր....

ՑՆՑՈՂ ՀԵՌԱԳԻՐ

— Պատիվ ունեմ ներկայանալու, — անհամարձակ ձայշնեց Հասանը:

— Հը՞, ել շե՞ն խոսում նարինջները, — հարցը եղ նավապետը:

— Նարինջն ել խոսի, նավապետ, — պատասխանեց Հասանը:

Նա ամեն ճիգ դործ եր դնում, բերանից խոսք չըթրացնելու համար...

— Հազար ի՞նչողես քիչ առաջ հայտնեցիր, վոր խոսում են նարինջները:

— Զեմ հիշում... ճիշտն ասած, չեմ հիշում, — թոթովեց Հասանը, — յերբ ծովի վրա ուժեղ փոթորիկ ե բարձրանում, խառնվում են իս մտքերը... Լավ վոր դուք ասացիր, վոր խելազար եմ... հայրս ել եր խելազար...

Դուքսունը վասնդն արդեն անցած կարծելով, ուրախ վազեց ընկերների մոտ:

Ծուղ-բու-ղու:

Կը-աւկը-տ-կը-ա:

— Այս անդամն ել ազատվեցինք:

— Ճիշտ:

— Ասում եյին, չե. վոր լավ մարդ ե յոլգաշ Հասանը: Մեկ ել, ով սարսափ, ազմուկով բացվեց դուռը և նավապետը նավաստիների հետ ներս մտավ:

— Իսկույն բանադ նարինջների արկղները։ Այստեղ
ինչ վոր խորհրդավոր բան ե կատարվում։ Յեթե արկղներում
մարդ գտնվի, գնդակահարել Հասանին, —խիստ հրամայեց
նու ու վերջին խոսքերն ասելիս նայեց Հասանին։

Հասանը հայացքը չփախցրեց նրանից։

Նավաստիները վերցրին արցանները։ Բացին հինգ
արկղ տաս, քսան, վոշինչ չգտան։

Ստուգել մյուսները։

Իմ խեղճ, իմ խեղճ բալիկներ, աշնան տերեկի պես եյին
դողում սարսափից...։

Հասանը մեռելի տեսք եր ընդունել։

Նավաստիները բացին ելի արկղներ։ Դարձյալ վոշինչ
չգտան։

— Իսկառես խելագարվել ե Հասանը. Բնչպես կա-
րող եյին խոսել նարինջները, —հուզված նկատեց մեկը։

— Ինչու միայն Հասանը, յես ել լսեցի։

— Ցես ել...։

— Ապուշ Հասանի ցնդարանության աղղեցությունն
ե, — հեգնեց մի յերիատարդ։ Զեռքը աարավ մի նոր
արկղի հղոսաց հանկարծ։

— Ի՞նչ պատահեց։

— Շունը վոտու կծեց։

— Սատկեցնել այդ շանը, — դայրացավ նավասպետը և
այնպիսի աքացի տվեց նրա մեջքին, վոր չորքոտանին ցա-
վեց կաղկանձեց, կծկվեց Հասանի կողքին։

— Մասացեք բարով կին, մայր, մնացեք բարով, յերե-
խաներ, — մղկանում եր Հասանը։

Նա զգում եր, վոր մոտ եր վախճանը...։

— Վերջացրիք, — անհամբեր հարցրեց նավասպետը։

— Հինգ արկղ ե մնացելը։

— Դեհ, շատու

Արկղից հանեցին Շուշիկին, մեջքին կապած կեռ դա-

շույն հանեցին զզզզված Զլֆեյին, փեշի տակին մեծ դանակի Սոսիկոյին հանեցին, ապա Արտոյին տափակած քթով...

Շունը պոչը ցցած մեջտեղ յեկավ, բարձրացավ լեռեկի թաթերի վրա, — բայց փոխանակ հաջելու, մարդավարի ասաց,

— Վոր այդպես ե, ինձ ել հանեցեք:

Այդպես ել հանելմէկ...

Բարձում են նարինջ, ստացվում ե մարդ.... Նավ և մտնում շուն, գուրս ե գալիս մարդ....

— Զե, վերջինն անհավատալի յե, այդպիսի բան չի կամող պատահել:

Նավապետն անձամբ վերցրեց դանակը և շան մորթու միջից գուրս յեկավ Դուրսունը՝ նարնջագույն շեկ տղա...

Մշուշ եր փովիլ սև ծովի վրա: Անձրի եր գալիս: Յերեխաների տրամադրությունը փառ եր:

Շարվել եյին նրանք պատի տակ, սեղմված մեկ-մեկու և նրանց գեմը նստել եր նավապետը: Թավ հոնքերի տակից խրսխտ նայում եյին աչքերը:

Նա ե՛ ճաշում եր և՛ հարցաքննում:

— Ելի յեմ կրկնում, ինչ նվատակով եյիր պահպել արկղներում:

Շուշիկը հանեց իր յերկար լեզուն և ձեռներով հասկացրեց, վոր լեզու չունի...

— Եյ, դու, ինչ պատճառով եյիր շնացեր, — դարձավ նավապետը Դուրսունին:

Նա ել լեզու չունի..., Նա ել լեզու չունի, — մեջ ընկավ Շուշիկը:

— Լոել — սաստեց հարցաքննողը, — Նա այնպես անլեզու յե, ինչպես դու...

— Ներսողություն, յես իսկի յել չասացի, վոր լեզու չունեմ: Յես համբ եմ, — խոսեց Շուշիկը:

Արտօն անթարթ նայում եր սեղանի խորովածին և
ախորժակով կուլ տալիս թուքը...

Քանի՞-քանի՞ որ նա վոչինչ չեր կերել...

— Չե-ես լսում,—գոռաց նավապետը,—յերկորդ
անգամ հարցն Արտօյին ուղղելով:

— Իհարկե նա չի լսում,—ոգնության հասավ Զիֆեն:

— Լավ, հիմա յես այնպես կանեմ, վոր լսի, — սպառ-
նաց նավապետը, մըրիկի պես առաջացավ, ապակեց
տղաներին, քաշքաց ազջիկների մագերից ու գոռաց.

— Այժմ լսեցի—ի—ի՞ք...

Յերեխաները լաց չեղանակ հանգամանքն ավելի
բարբոքեց նավապետին:

— Վերջին անգամ եմ հարցնում. ի՞նչ նորատակով
եյթ պահիել արկղների մեջ. Յեթե չասեք, ծովը գցել
կամ բոլորիդ:

— Ի՞նչ կլինի նավապետ, թող մենք ել ճաշենք,—
պատասխանի փոխարեն խնդրեց Արտօն և մոտեցավ
սեղանին,

Դեռ կուլ չեր ավել առաջին պատառք, յերբ ներս
վազեցին նավատիները. յերեխաներին հրելով տարան մի
մութ խաց, գուռը կողպեցին:

Կես գիշերին մեկը կամացուկ բացեց դռ. , մոտեցավ
հատակին քնած յերեխաներին, ինչ վոր դրեց նրանց մոտ,
արտգ հեռացավ...

Հասանն եր, յոլդաշ Հասանը. Նա յերեխաներին տվեց
իր հացը ու ինքը մնաց քաղցած...

— Յես մեծ եմ, կղիմանամ, մեզը են խորհրդային
բալիկները, — չերմ շշնչաց նա:

Յերեխաները սարսափած վեր թռան:

Պը՞ս, զը՞ս, զը՞ս...

— Այդ մեմ սպանեցին.

Բնում...

- Այդ ում զցեցին ծովս:
 - Յոլդաշ Հասանին... Յոլդաշ Հասանին...
-

Ուրբաթ եր:

Ստամբուլի բուլվարներում, սպարտեզներում զրունում եր հասարակությունը:

Լքագրավաճառ յերեխաները կանչում եյին:

— Ծնցիչ հեռագիր, նորությունն Տաճկական շոգենավիր վրա բռնված են խորհրդային լրտեսներ:

— Մանշուկ հոս յեկուր:

— Նախ ինձ տուր:

Ու ձեռքեւ ձեռք խլխլում եյին որաթերթերը:

«Այսոր, բեռնակիր «8» տաճկական նավով Պոլիս կհասնեն խորհրդային լրտեսներ: Անօնք Բաթումին նավ մտած են, սպահված նարիջներու արկղներու և շան մորթու մեջ»:

— Ի՞նչպես թե շան մորթու, — զարմացած բացականշում եյին ընթերցողներն ու ավելի հափշտակված շարունակում:

«Լրտեսներ են, յերկուսն աղջիկ են: Անօնք զինված եյին դաշտոյնով:

Ցեթեւ աղջիկները դաշույնով են զինված, յերեակայեւու յեւ, թե մանչերը հետներուն ինչ վերցրած կըլլան, — եզրակացնում եյին ընթերցողները:

— Անշուշտ տեսորի յեն յեկած:

— Ցերթանք նավահանգիստ:

— Վազենք...

Ցերբ բաղմությունը հեզ ի հեզ հասավ, ծովի վրա արդեն յերեսում եր բեռնակիր նավը:

Այդ համեստ, հնամաշ նավը դեռ յերբեք այդպիսի ընդունելության չեր արժանացել:

Բոսկեն տարի յեր թվում:

Յերբ վերջապես նավը խորիս զցեց, իսկույն մեջտեղ յեկան վոստիկանները, շղթա կազմեցին, մի քանիմն ատրճանակները պատրաստ բռնած նավ յեկան, խորհրդային լրտեսներին ընդունելու:

Ամբոխն սպասում եր սրտաթրոփ, ամեն մեկն աշխատում եր առաջին շաբառում տեղ զրավել, ավելի լավ տեսնելու համար:

— Ի՞նունմ են, ի՞նունմ...

Աշխատացած հանդիսականները բարձրացան վոստիկի ծայրերի վրա... և հիամթափված յետ-յետ քաշվեցին:

Տաս վոստիկանների ուղեկցությամբ նավից իջան հինգ յերեխա զզզզված, անվաս: Դուրսունը բռնել եր շան մորթին. Արտոն կրծում եր հաց:

— Քեռի, ես ինչ միտինդ ե,— հարցրեց Շուշիկը, բազմությունը ցուց տալով:

— Լունը—սաստեց վոստիկանը:

Կորմիր քույրիկը վիրավորված կախեց շրմունքները, նայողները այդ տեսնելով, քրքջացին:

— Դուրսուն, յերեկի քո շան մորթու վրա յեն ծիծառում,— ասաց Զլֆեն, — թե չե, մենք հո պոչավոր չենք, վոր...

— Զիսունը, — խրոխա նկատեց վոստիկանը:

Յերբ կալանավորները քաղաք մտան, մեծերը «Ցոցիչ հեռազբից» շբագրաբաժ յետ մնացին, փոխարենը յերեխաններին հետեւեցին մանուկները:

Դուրսունը մեկ քայլում եր, մեկ ել գեռ իրեն շան մորթու մեջ կարծելով, բարձրածայն հաջում...

Փոքրիկները քրքջում ելին հրճվանքից:

— Հափ, հափ-հափ-հափ...

— Զհաջնէր—բարկացավ վոստիկանը:

— Ես ի՞նչ զարմանալի յերկիր ե, — վրդովեցին մեր
հերոսները, — վոչ կարելի յե խոսել վոչ հաջել...
— Զբողոքել — գոռաց վոստիկանը:
— Ի՞նչ ե, ինքննադատության չեք դիմանում, — հետ-
նեց Արտոն:

Նրանց կանգնեցրին փոքր պատուհաններով մեծ տան
մոս:

Բացվեցին յերկաթյա դռները: Նրանց մացրին ներս
ու խկույն փակեցին:

Ապա բացվեցին ելի դռներ: Նրանց ելի մացրին ներս
ու դարձյալ փակեցին:

Յերբորդ անդամ բացվեցին դռները, այս անդամ նեղ-
միկ ու ցած:

Յերեխաներին մացրին ներս, վոտներին շղթա հազց-
րին: Ծածկեցին դռները, յերեք անդամ պատացրին բանալին:
Խուցը մութն եր, թաց:

Կալանավորները շոշափելով գտան իրար, նստեցին
հաստակին:

— Սա բանտ ե, — ասաց Արտոն, ծանր լոռիթյունը
խղելու համար:
— Գերեզման ե, — հակառակեց Սոսիկոն:
— Շըփ-շըփ-շըփ-շըփ...
— Սը՝ սսա... ես ի՞նչ ձայն ե, — վախեցած ընդհատեց

Զլֆեն:

Միջանցքով անցնում եյին կալանավորները: Նրանց
տանում եյին հարցաքննության: Վոտների ծանր շղթաները
խանգարում եյին քայլելու... Նրանք քաղցած եյին, ուժաւ-
պառ, Յետ մնացողներին վոստիկանները հրում եյին հրա-
ցանի կոթով:

Նրանցից մեկը՝ Ալին յերերաց, ընկալվ:

Բոլշիկ եր նա: Նրան բռնել եյին դորձարսնում հե-

դավոխական թերթիկներ բաժանելիս։ Հինգերորդ տարին
եր տառապում բանտում։ Ծանը պատիմներով փորձել եյին
իմանալ կոմունիստ ընկերների անունները։ Հացի փոխարեն
կերակրել եյին մարտակով։ Շիկացած շամփուրներով դա-
դել եյին մարմինը։

— Հիմա անզայման կմատնի, — մտածել եյին։
Ալին նորից եր լոել...

Նրան զցել եյին ներքնահարկ ու ներս մացրել տաս-
նյակ առնետներ։ Նրանք բանտում ծառայում եյին, վորպես
պատժի միջոց։ Նրանց որերով պահում եյին քաղցած, ապա
թողնում կապված կարանափորի վրա։ Խոշոր մէները սովից
զազազած բզզկառում եյին իրենց զոհին։

— Այս անզամ կը բանա շրթունքները, — մտածել եյին։
Ալին դարձյալ չեր խոսել։

Բանտապեսն ստիպված խլել եր նրան առնետների
ճանկերից, վոր չմահանար։ Յեթե մեռներ Ալին, ել ճա-
րագոր չեր լինի իմանալ մյուս կոմունիստների անունները։
Իսկ յերեկ... Յերեկ նրա վոտների տակ խարույկ եյին
վառել... Բոցը խորովել եր նրա միսը...

— Դեհ, հիմի աեսնենք, ինչպես չես ասի, — հոհուա-
ցել եյին։

Ալին համառ լոռություն եր պահպաներ։

— Յես չգիտեմ, թե ել ինչ միջոցների զիմեմ, — զի-
նաթափիվել եր բանտապետը, — զարմանալի նյութից են բազ-
կացած բոլշևիկները, նրանց չի սարսափեցնում վոչ մի
պատժժ...»

Յեկ այսոր Ալուն դարձյալ տանում եյին հարցաքըն-
նությունն։ Նա չեր կարողանում քայլել... Վերքի մը մուռից
ու շաթափիվում եր։ Մթնեցին աչքերը, յերերաց Զընկնելու
համար բռնեց պատից, բայց ընկավ... Ուզեցին բարձրաց-
նել, փայտացած մարմինը չծալվեց...»

Մեռել եր Ալին, բանվորների բարեկամը...»

Միջանցքում տիրեց իրարանցում։ Յերեխաները, դժոխ
ձայները խլացնելու համար, յերգեցին «Ինտերնացիոնալ»։

Դուռը բացվեց, յերկաց սարսափելի մի կերպարանք։
— Լոել, — հրամայեց նա։

— Մենք մեզ համար ենք յերգում, — ասաց Շուշիկը։
— Լոել-է-էլ...

Նրանք լսեցին։ Սոսիկոն կամաց շշնչաց։


— Սա անպայման ֆաշտու և, միայն ֆաշտոր կա-
րող ե այդպիսի ահռելի տեսք ունենալ...

— Յես համոզված եմ, վոր որանք մեզ կենդանի չեն
թողնի, — հառաջեց Դուրսունը։

— Ո՞վ գիտե, այսոր իսպանիայում ուռմրն ելի քանի
յերեխա, քանի հայր, մայր, և սպանել — զիսմամբ խոսակ-
ցության նյութը փոխեց Արտոն։

— Հարկավոր ե այստեղից փախչելու և իսպանիա
համանելու հնար գտնել — ձայնեց Սոսիկոն, — ձեզանից
ով խելոք առաջարկ ունի։

Յերեխաներն իսկույն սկսեցին մասձել։ Նրանք մո-
ռացան և բանոր և մահվան սարսափը։



ԲԱՅՑ ԱՓՍՈՍ ՎՈՐ ՅԵՐԱԶ ԵՐ

Հաջորդ որրնըսմանց տարան հարցաքննության։
Սեղանի մոտ նստել ելին մարդիկ, կտապած սուր, թուր, հրացան։
Արտան բոլորի կողմից հայտարարեց։

— Ձեր հարցերին չենք պատասխանի։ Մենք

խորհրդային հպատակ ենք, միայն խորհրդային ներկայացուցիչն իրավունք ունի մեր գործը քննելու։

— Վարտեղից զիտեք այդ որենքը, — զարմացավ բանտառեալ։

— Դպրոցում ենք սովորել։

— Այս, ձեր այդ դպրոցը, — մռմռաց նա։

— Ե՞ս ե, ձեզ գուր չե՞ զալիս, — հեղնեցին յերեխաները։

— Մեր հասարակագիտության ուսուցիչն այսպես լավն ե, վոր... պաշտպանեց Շուշիկը։

Զթողին, վոր շարունակեր... Քննիչը զայրացած ձեռքը խփեց սեղանին ու գոռաց։

— Լուցնել այդ աղջկան, թե չե...

— Թե չե, ինձ կտապանի, — մտածեց Շուշիկը։

Զանցած մի ժամ, նրանք արդեն գտնվում ելին խորհրդային ներկայացուցչի մոտ։

Ընկեր կուզնեցովը մեկ եր հարցնում, յերեխաները տասն ելին պատասխանում։ Խոսում ելին իրար ընդհա-

տեղով, ամեն ինչի մասին մանրամասն:

— Զեզ վոր տեսա, կարծես հայրիկին տեսա, — ուրախությունից թոթովում եր Շուշիկը, — դուք այնպես լավ եք:

Արտօն աշխատում եր լուրջ մնալ, չե՞ վոր ամբողջ խմբի մեծն եր նա...

— Քաղցած չե՞ք, — հարցրեց ընկեր Կուգնեցովը:

— Մոտավորապես, — պատասխանեցին նրանք:

Խորհրդային ներկայացուցիչը սեղմեց կոճակը, պատվերեց թել ու նախաձաշ բերել:

Յերեխաները կերան, խմեցին և ավելի համարձակ շարունակեցին զրուցը:

Ընկեր կուգնեցովը լսում եր մեծ ուշադրությամբ: Ժամանում ելին նրա կապույտ աշքերը, Մանուկների հետ մանկացած քրքջում եր ճրճվանքով:

— Հասրա... մեր թիվը հասավ հիսունհինգի, բայց լեռը միլիցիններները Բաթումում շրջապատեցին մեզ կորցրինք իբրա, — բացարեց Սոսիկոն:

— Քանի հոգու, — հարցրեց ընկեր Կուգնեցովը, կարծես լսողության վրա կասկածելով:

— Հիսունհինգի, — հիսունհինգի, — միարեան պատասխանեցին յերեխաները:

— Չասեք ամբողջ մի բանակ... իսկ ովք եր ձեր հրամանատարը.

Յերեխաներն իսկույն մասնանշեցին Արտօյին:

Արտօն զսպելով ներքին բերկանքը, աշխատեց սառնափրտ յերեփալ:

— Այժմ իմ սակավաթիվ բանակի անունից խնդրում եմ ոգնել մեզ իսպանիա համար, — մենք այսուեղ յերկար մնալու արամադրություն չունենք. Ժամանակը թանգ ենիզ համար:

— Ճիշտ ե, — հաստատեցին ձայները:

Ընկեր կուզնեցովը պատասխանեց.

— Խոսանում եմ բոլորիդ համար տոմսակ գներ
Յերեխաներն ուրախությունից շրջապատեցին նրան։
— Զեղ ապահովել ուտելիքով, փողով։

Յերեխաներն ուրախությունից զրկեցին նրան։ Ար-
տան մինչև անդամ համբուրեց ընկեր կուզնեցովին։

— Յեվ, — շարունակեց ընկեր կուզնեցովը
— Ի՞նչ և, ի՞նչ և, ընդհատեցին յերեխաները։
— Յեվ դուք կմեկնեք դեպի . . . յետ։

Յերեխաները շշմած բացականչեցին։

— Ի՞նչպես թե։

— Առաջ գնալ չի կարելի, — հանդիսա նկատեց
ներկայացուցիչը։ Խորհրդային իշխանությունը չի խառըն-
վում ուրիշ պետությունների դործին։

Յերեխաները գիշերային ծաղիկների նման գլուխները
կախեցին։

— Դուք դեռ փոքրիկ եք, իմ բալիկներ, յերբ մեծա-
նաք, յես ձեղ կնոլիրեմ կլիմ Վորոշիլովին, Կըդառնաք
կարմիր բանակային, կպաշտպանեք խորհրդապին հայրենիքը,
իսկ հիմա վերդարձեք և շարունակեցեք ձեր ուսումը, — ա-
ռաց ընկեր կուզնեցով։

Դուրսունն ու Սոսիկոն կարծես համաձայնվեցին,
բայց կարմիր քուրիկները տիրեցին։

— Մեղ ի՞նչ աղջիկներին բանակ հո չեն տանում
փոք ուրախանանք, — անբավարար հառաչեց Զլֆեն։

— Չանանեն ել, զուով կգնանք, — խրախուսեց Շու-
շիկը։ — Չապահի մոտ գնդացրի վրա կին եր աշխատում . . .

Արտան չեր խոսում։ Չափաղանց մոալլ եր։

Ի՞նչպիսի գժվարությամբ նշանաք հասան Ստամբուլ, Կոր-
ցրին սիրելի Գուրգենին, իրենց պատճառով սպանեցին, ծով
զցեցին յուղաշ Հասանին... Նրա վեց յերեխաները հիմա

կանչում են հայրիկ, հայրիկ, մի կտոր հաց... Բայց հայրիկն
ել չկա... լաց են լինում մայբն ու կինը...

Իսպանացի մանուկները պարզել են իրենց թաթիկները.

— Արտո ջան, Արտո, շուտ հասեք, փրկեցեք՝մեզ, — աղաչում
են— Թաշիսաները սումբ են նետում, գազ են բաց թող-
նում, խեղդում են մեզ...

Արտոն ուզում եր շնուր համել այնտեղ, մինչդեռ...
մինչդեռ տսում են՝ դարձեք յետ...

Նա չկարողացավ զսպել վիշտը, գլուխը զրեց սեղանին
և դառնացած հեկեկաց...

Հայրը քնաթաթախ վեր թուավ:

— Այս ով ե լալիս, — զարմացավ նա:

Արտոն կծկվել եր մահճակալի տակ, կրծքին ամուր
սեղմել հոր ատրճանակը, արտասվում եր յերազի մեջ...

— Բայիկ, զարթնիր, զարթնիր, վեր, — ձայն տվեց
հայրը:

Տղան մեծ դժվարությամբ բացեց աջերը, շփոթված
նայեց շուրջը, բայց նորից քունը տարավ:

— Ընկեր կուզնեցով, խնդրում եմ, իմ սակավաթիվ
բանակի կողմից, աղաչում եմ, թույլ ավեք, ոգնեցեք մեղ
տուաջ գնալու:

— Այդ ուր ես ուզում գնալ... են ել զինված...—
ծիծաղեց հայրը:

— Իսպանացիք մեզ են սպասում, լսում եք, ընկեր
կուզնեցով, — դեռ խոսում եր Արտոն, — հարկավոր է
ջախջախել խոռվարներին:

— Ահա թե ինչ... — բացականչեց հայրը, հիշեց, թե
ինչպես գիշերը մի բան զբնգալով ընկալ հատակին: Զայ-
նի վրա նա թեև վեր թուավ, սակայն քունը զիսին վոչինչ
չկարողացավ հասկանալ: Այդ այն ըստեն եր, յերբ Արտոն
չկարողացավ հայրին վայը զցեց ատրճանակը և վախից պահվեց

մահճակալի տակ, վորոշեց ասրձանակի վորխարեն պատի
դաշույնը վերցնել:

— Անպայման սպասել ե, վոր քննեմ, հետո փախչի
մինչդեռ քունը տարել ե, մնացել... — Մտածեց հայրը, զը-
լուխը թափահարելով:

Դուռը կամացուկ բացվեց: Շեմքի վրա յերեացին
Գուրգենն ու Շուշիկը: Նրանք և բարկացած եյին, վոր
Արան մինչեւ լույս նրանց սպասեցրել եր, չեր յեկեր, և
փախենում եյին, վոր Արան գուցե առանց նրանց եր ճա-
նապարհ ընկեր:

— Արան առա-առն ե, — հարցրին նրանք անհամարձակ:

— Քնած ե:

Բնիկերներն իսկույն նայեցին մահճակալին, բայց հայ-
րը ցույց տվեց մահճակալի տակը:

— Ես, գմւռու, — հիասթափված ծիծաղեցին ընկերները:

Զայնի վրա զարթնեց Արան, — զարմանքից ճշաց: Նա
լաց և լինում մեռած Գուրգենի համար, մինչդեռ Գուր-
գենը կանգնել ե գլխավիրելով, ծիծաղում ե:

Յերազ, բայց վճռն ե յերազը, այս, վոր ընկերոջն ար-
կղի հետ ծով նետեցին, թէ՞ այս, վոր...

Սթափվելու համար նա արորեց աչքերը, վորքի յելավ:


— Ինչ լավ, վոր դու կենդանի յես, — բացականչեց
նա Գուրգենին գրկելով: — Սակայն ուր ե սիրելի Դուր-
սունը, Զգիեն...: Ու՞ր ե յոլգաշ Հասանը...

Յեզ Արան մանրամասն պատմեց յերազը:

Բնիկերները լարված ուշադրությամբ լսեցին նրան:

Հայրն ասաց:

— Ճիշտ ե տսել ընկեր կուղնեցովը, յերբ մեծանաք,
ձեզ կնվիրենք Կիմ Վարոշիովին, վոր պաշտպանեք մեր
սոցիալիստական հայրենիքը, իսկ հիմա դնացեք դպրոց:
Ժամեւ ութից տաս րոպէ յե պտկաս:



Պատ. Խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. Խմբագիր՝ Ան. Գառզարյան
Սրբագրիչ՝ Ա. Արդարանյան

Կութիւնի լիազոր՝ Վ.—2033. Հրատ. № 4791

Պատվիր 58 Տիրամ. 3000

Թուղթ 62×94 Տուազը. 4 մմ.

Մեկ մամ. 24480. Դշան.

Հանձնված և արտադրության 11 հունվ. 1939 թ.

Ստորագրված և սպառդրության համար 7 հուն. 1939 թ.

Պետհրամի 1 տօղարանի Ցերեան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002004

ԳԻՒԾ 1 Ո. 80 Կ.

184.

ЦЕНА

<i>11</i>
<i>24345</i>